

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ



ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՏՆՕՐԵՆ-ՊՐՈՈՒԵԿՏՈՐԻ ԺՊ

ՆԱԶԵԼԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԳՅՈՒՄՐԻ-2024

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....	3
1. ՈՒԳԿԿ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆՆ ԸՍՏ 2023-2027 ԹԹ. ՀՆԳԱՄՅԱ/ԱՄԵՆԱՄՅԱ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ .....	4
1.1. ԲԱՐՁՐՈՐԱԿ ԵՎ ՍՐՑՈՒՆԱԿ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ.....	5
1.2. ԲԱՐԵԼԱՎՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ .....	45
1.3. ԲԱՐՁՐՈՐԱԿ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ .....	58
1.4. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ.....	66
1.5. ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ.....	76
2. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ .....	79
2.1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ.....	80
2.2. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ .....	110
2.3. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ.....	132
3. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ .....	136

## ՆԱԽԱԲԱՆ

Հաշվետու 2022-2023 ուստարին «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ՇՊՀ) բոլոր ստորաբաժանումների համար առանձնանում է իր մարտահրավերներով, հստակեցված նպատակներով և խնդիրներով: ՇՊՀ-ն հաշվետու տարում, որպես արձանագրված առաջխաղացում, իր գործունեությունը ծավալում է մշակման երեք փուլերով անցած և 2022թ. նոյեմբերի 19-ին Հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված [2023-2027 թթ. Զարգացման ռազմավարական ծրագրով](#) (այսուհետ՝ ԶՌԾ/ՌԾ): ԶՌԾ-ը հստակորեն սահմանագծել և ուղենշել է բուհի առաջիկա հինգ տարիների զարգացումը՝ իր վերանայված առաքելության և տեսլականի ներքո առանձին դերակատարություն հատկացնելով երեք կենտրոններին:

ՇՊՀ-ի Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնը (այսուհետ՝ ՈՒԳԿԿ/Կենտրոն) իր գործունեությունը ծավալել է իրեն վերապահված ռազմավարական նպատակին/խնդիրներին և կանոնադրական գործառույթներին համապատասխան: Վերոնշյալի համատեքստում հաշվետու տարում կազմվել է Կենտրոնի՝ 2023-2027թթ. հնգամյա/ամենամյա աշխատանքային ծրագիրը, որին համահունչ ՈՒԳԿԿ-ն կազմակերպել է իր աշխատանքները՝ իրականացնելով գործառութային հիմնական պարտավորությունները: Հաշվետվողականության հստակության, թափանցիկության, հետադարձ կապի ապահովման և շարունակական բարելավմանը նպաստելու կարևորությունից ելնելով՝ ներկայացվող հաշվետվությունը կազմված է երկու հիմնական մասերից, որոնցից առաջինը վերաբերում է Կենտրոնի՝ [2023-2027թթ. ԶՌԾ-ի և ԹՎԳԾ-ի հնգամյա/ամենամյա աշխատանքային ծրագրի](#) կատարողականին, իսկ երկրորդը՝ առավելապես Կենտրոնին վերապահված գործառույթներին՝ [«Գործունեության հաշվետվություն»](#): [«Հավելվածներ»](#) բաժնում, ըստ անհրաժեշտության, ներկայացված են լրացուցիչ տեղեկություններ, հիմքեր, ինչպես նաև Google form հարթակում ՈՒԳԿԿ-ի կողմից իրականացված հարցումների արդյունքները:

**1. ՈՒԳԿԿ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆՆ  
ԸՍՏ 2023-2027 ԹԹ. ՀՆԳԱՄՅԱ/ԱՄԵՆԱՄՅԱ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ  
2022-2023 ՈՒՍՏԱՐԻ**

Հաշվետու տարում, ներկայացնելով ՈՒԳԿԿ-ի գործունեության կատարողականն ըստ [2023-2027թթ. ԶՈԾ-ի և ԹՎԳԾ-ի հնգամյա/ամենամյա աշխատանքային ծրագրի](#), առանձին-առանձին անդրադարձ ենք կատարելու ԶՈԾ-ի և ԹՎԳԾ-ի ուղղությամբ իրականացված աշխատանքներին, որոնք, ինչպես և աշխատանքային ծրագրի փիլիսոփայությունն է ենթադրում, հատման հստակ տիրույթներ ունեն: Առանձին մասերով ներկայացվում են հետևյալ բաժինները՝ համապատասխան աղյուսակներով՝

- 1.1. «Բարձրորակ և մրցունակ կրթական ծրագրեր»,
- 1.2. «Բարելավված կրթական միջավայր»,
- 1.3. «Բարձրորակ մարդկային ռեսուրսներ»,
- 1.4. «Արդյունավետ կառավարում»,
- 1.5. «Միջազգայնացում և համագործակցություն»:

## 1.1. ԲԱՐՁՐՈՐԱԿ ԵՎ ՄՐՑՈՒՆԱԿ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Աղյուսակ 1.1.1

ՇՊՀ-ի՝ 2023-2027թթ. Զարգացման ռազմավարական ծրագրի կատարողական

N	Խնդիրներ		Լուծումներ/գործողություններ	Լուծման/ գործողության իրականացման ժամանակա- հատվածը	Կատարողականի ցուցիչ
1 (1.1)	Բարձրորակ և մրցունակ կրթական ծրագրեր	1.1. 1	Կրթական ծրագրերի (այդ թվում՝ աշխատանքի վրա հիմնված) և վերջնարդյունքների, ինչպես նաև վերջիններիս կիրարկումն ապահովող նորմատիվ, ներքին իրավական ակտերի բովանդակային վերանայում և բարելավում՝ շահառուների և շահակիցների կարիքներին համահունչ:	I փուլ  I եռամսյակ  2023 –  IV եռամսյակ  2024  Շարունակական , ըստ կարիքի	<ul style="list-style-type: none"> <li>➤ Կրթական ծրագրերի (ԿԾ-ների) բարեփոխմանը միտված ներդրված և գործող մեխանիզմներ ու ընթացակարգեր:</li> <li>➤ Լավարկված ԿԾ-ներ:</li> <li>➤ Աշխատանքի վրա հիմնված առնվազն 3 կրթական ծրագրեր:</li> <li>➤ Գործատուների և ուսանողների՝ համալսարանում ստացած կրթությունից բավարարվածության մակարդակի բարձրացում:</li> <li>➤ Խիստ թերբեռնված կուրսերի քանակի կրճատում:</li> </ul>

					<ul style="list-style-type: none"> <li>➤ ՄԿԾ-ների պատասխանատուների հստակեցված գործառույթներ:</li> <li>➤ ՄԿԾ-ներում բազմազանեցված կամ ընտրական բաղադրիչներ:</li> <li>➤ Ուսանողների գնահատման լավարկված մեթոդաբանություն և գործող նոր կարգ:</li> <li>➤ Անանուն գնահատման համակարգի գործարկում:</li> <li>➤ Գրագործության դեմ պայքարի բազմազանեցված և հստակեցված մեխանիզմներ:</li> </ul>
--	--	--	--	--	--

**ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ (ԿԾ-ՆԵՐԻ) ԲԱՐԵՓՈՒՄԱՆԸ ՄԻՏՎԱԾ ՆԵՐԴՐՎԱԾ ԵՎ ԳՈՐԾՈՂ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ ՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ**

ՇՊՀ-ի համար որակավորումների ազգային և ոլորտային շրջանակներին, շահառուների և շահակիցների կարիքներին համապատասխան որակյալ կրթական ծառայությունների մատուցումը գերակա նպատակ է: Այս համատեքստում կարևորվում են փոփոխվող արտաքին միջավայրի և ՀՀ աշխատաշուկայի պահանջներին համահունչ կրթական ծրագրերի պլանավորումը, իրականացումը, որակյալ և մրցունակ մասնագետների պատրաստումը: Բարձրորակ և մրցունակ կրթական ծրագրերը, դրանց իրականացումն ապահովող ինստիտուցիոնալ հիմքերը վերոնշյալ նպատակի իրականացման երաշխիքներն են: Ստորև նախ կներկայացվեն հաշվետու տարում ստեղծված նոր իրավական փաստաթղթերը, ներդրված մեխանիզմները և հաջորդիվ նաև գործող լավարկված կարգերն ու ընթացակարգերը, որոնք կարգավորում են այս գործընթացները: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ ներկայացվող փաստաթղթերից յուրաքանչյուրն անցել է քննարկման

փուլեր՝ պահպանելով ներքևից վերև առաջարկություն/ներ/-քննարկում-աշխատանքային տարբերակ-հրապարակում-նախագիծ-հաստատում շղթան: Այս առումով հավելենք նաև, որ 2022թ. -ի հոկտեմբերին իրավական փաստաթղթերի քննարկումներում ներքին և արտաքին շահակիցների ու շահառուների ավելի մեծ ներգրավվածություն, մասնակցայնություն և թափանցիկություն ապահովելու նպատակով համալսարանի պաշտոնական shsu.am կայքէջում գործարկվել է [«Նախագծերի քննարկում»](#) պատուհանը, որտեղ, ըստ 2022 թվականի հոկտեմբերի 11-ին Գիտական խորհրդում հաստատված [«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի՝ Գիտական խորհրդի հաստատմանը ներկայացվող ներքին իրավական ակտերի փոփոխությունների, լրացումների, նախագծերի վերաբերյալ քննարկումների կազմակերպման, անցկացման և ամփոփման կարգի»,](#) Գիտական խորհրդի կողմից հաստատվող փաստաթղթերը պարտադիր ենթակա են քննարկման: Այս ամենով հանդերձ, ներկայացենք.

**Նոր իրավական փաստաթղթեր՝**

- [«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամում մասնագիտական կրթական ծրագրերի կառավարման հայեցակարգ \(կատարված՝ ՈՒԳԿԿ-ի կողմից\)](#)

ՄԿԾ-ների արդյունավետ կառավարման նպատակով մշակվել և գործածության մեջ է դրվել [ՄԿԾ-ների կառավարման հայեցակարգը](#), որը մանրամասն նկարագրում է ՄԿԾ-ների կառավարման մեթոդաբանությունը, մասնավորապես, ընթացիկ (ամենամյա) լավարկման և փուլային բարելավման շղթան: Հայեցակարգը մշակվել է հաշվետու տարում, իսկ հաստատումը ՇՊՀ-ի ԳԽ-ում եղել է 2024 թվականին:

ՇՊՀ-ն ՄԿԾ-ների կառավարումն իրականացնում է ՈՒԳԿԿ-ի, ամբիոնի, ՄԿԾ-ի մեթոդական խորհրդի, ՄԿԾ-ի պատասխանատուի, ՈԱ բաժնի/ ամբիոնի ՈԱ աջակից-դասախոսի միջոցով: ՄԿԾ-ների կառավարման արդյունավետության գնահատումն իրականացնում է բուհի ՈԱ բաժինը:

Ըստ հայեցակարգի՝ ՄԿԾ-ների մասնագրերում, առարկայական նկարագրիչներում ամրագրված դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների ընտրության արդյունավետության չափման համար կիրառվում է երկու գործիք. առաջինը՝ ուսանողների և ՊԴ կազմի հարցումների արդյունքների վերլուծությունները (ուսանողների շրջանում իրականացվող «ՊԴ կազմի մասնագիտական, մանկավարժական և կազմակերպչական կոմպետենցիաների գնահատման», ՊԴ կազմի շրջանում՝ «Դասախոսի մասնագիտական, մանկավարժական և կազմակերպչական կոմպետենցիաների զարգացման կարիքների գնահատման» հարցումները), երկրորդը՝ դասալսումների արդյունքների վերլուծությունները (սկսած 2023-2024

ուստարվա 2-րդ կիսամյակից՝ դասալսումներն իրականացվելու են համաձայն նոր հաստատված [Դասալսումների կազմակերպման և իրականացման կանոնակարգի](#)): Դրանց հիման վրա են ձևավորվում ընթացիկ (ամենամյա) լավարկման առաջարկությունները, որոնք, մասնավորապես, վերաբերում են դասավանդման, ուսումնառության մեթոդների ընտրությանն ու լավարկմանը, գնահատման ձևերի և մեթոդների բարելավմանը, հանձնարարականների վերանայմանը, ինչպես նաև դասընթացների բովանդակության վերանայմանը և ռեսուրսների ապահովմանը: [ՄԿԾ-ների կառավարման հայեցակարգում](#) առանձին հավելվածով ներկայացված է նաև դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդաբանությունը՝ ընդգծելով ՄԿԾ-ի ակնկալվող վերջնարդյունք ↔ դասընթացի վերջնարդյունք ↔ դասավանդման մեթոդ ↔ ուսումնառության մեթոդ ↔ գնահատման մեթոդ /հանձնարարականներ ↔ ռեսուրսներ բաղադրիչների համահնչեցման անհրաժեշտությունը և դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների ընտրությունը պայմանավորող գործոնները: Ստորև բերվող մատրիցան սխեմատիկ և համապարփակ ձևով ներկայացնում է ՄԿԾ-ների կառավարման մարմինների պատասխանատվության շրջանակները:

**ՄԿԾ-ՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՏՐԻՑԱ**

Հ/Հ	Կառավարման մարմիններ/Կառավարման փուլեր	ՈՒԳԿԿ/ՈՒԱԲԳՀԲ	ՄԿԾ-ների մեթոդական խորհուրդ	Ամբիոն/Ամբիոնի վարիչ	ՄԿԾ-ի պատասխանատու	ՈԱ բաժին/Ամբիոնի ՈԱ աջակից-դասախոս
		Շրջանավարտների, գործատուների հարցումներ	Ընթացիկ /փուլային բարելավման պլան-փաթեթ	Դասալսում, Հաշվետվություն	Բենչմարքինգ, SWOT, Հաշվետվություններ, Հարցումներ	Հարցումներ (ուսանողներ, ՊԴ կազմ),
1	Իրականացում			X		
2	Ընթացիկ վերահսկում	X		X	X	
3	Մշտադիտարկում/Կարիքների վերհանում	X		X	X	X



4	Գնահատում		X		X	X
5	Բարելավում	X	X	X		
6	Վերապլանավորում	X				X
7	<i>Նոր շրջափուլ</i>					

- [«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամում բենչմարքինգի իրականացման մեթոդաբանություն \(կատարված՝ ՈՒԳԿԿ-ի կողմից\)](#)

ՇՊՀ-ի իրավական սույն փաստաթուղթը սահմանում է բենչմարքինգի տեսակները, իրականացման մեթոդաբանությունը: Համաձայն այս փաստաթղթի՝ հետալսու իրականացվող բենչմարքինգը լինելու է ինստիտուցիոնալ առումով կարգավորված գործընթաց: Ընդ որում, այն կարող է ուղղված լինել ոչ միայն ՄԿԾ-ների քննությանը, այլև ՇՊՀ-ի գործունեության այլ ոլորտների ուսումնասիրմանը ևս: Նշված փաստաթուղթը կանոնակարգելու է մի կարևոր գործընթաց, որը ՄԿԾ-ների, ինչպես նաև ՇՊՀ-ում տարբեր գործընթացների հետազոտահեն բարելավման քաղաքականության իրականացումն է ապահովելու: Ինչպես՝ ՄԿԾ-ների բարելավմանը նախորդող վերլուծություններից է առաջավոր փորձի համեմատական ուսումնասիրությունը՝ բենչմարքինգը, որին էլ հետևում է SWOT վերլուծությունը: Նշենք, որ մագիստրոսի ԿԾ-ների լավարկման ժամանակ այս գործընթացն այլևս կատարվելու է կանոնակարգված:

- [«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամում դասալսումների կազմակերպման և իրականացման կանոնակարգ \(կատարված՝ ՈՒԳԿԿ-ի կողմից\)](#)

Սույն կանոնակարգը նկարագրում է մասնագիտական ամբիոններում դասախոսությունների, սեմինարների, գործնական և լաբորատոր պարապմունքների դասալսումների կազմակերպման և իրականացման ընթացքը: Դասալսումների իրականացումը՝ որպես ՄԿԾ-ների իրականացման մշտադիտարկման և դասավանդման գործընթացի որակական ցուցանիշների գնահատման և հետազոտման գործիք, հնարավորություն է ընձեռում՝ բացահայտելու մասնագիտական կրթության փաստացի իրականացման որակի ապահովման խնդիրները, ինչպես նաև Հիմնադրամի ՊԴ կազմի մասնագիտական, մանկավարժահոգեբանական գործունեության արդյունավետության գնահատումն ու բարելավումը՝ նպաստելով ՄԿԾ-ների նպատակների իրականացմանը: Ընդ որում, մշակվել է դասալսման ձևաթերթ և այն լրացնելու ուղեցույց: Համահնչեցված են «Ուսանողների շրջանում իրականացվող «ՊԴ կազմի մասնագիտական, մանկավարժական և

կազմակերպչական կոմպետենցիաների գնահատման», ՊԴ կազմի շրջանում՝ «Դասախոսի մասնագիտական, մանկավարժական և կազմակերպչական կոմպետենցիաների զարգացման կարիքների գնահատման» հարցումները, դասալսումների չափման գործիքակազմերը: Ավելին, մնացորդային գիտելիքների ստուգման ոչ բավարար արդյունքների գրանցման դեպքում ստեղծվում է հանձնաժողով, որը ՈւԳԿԿ-ին առաջարկում է տվյալ դասախոսի մոտ իրականացնելու դասալսումներ և/կամ տվյալ կուրսի մոտ մեկ կամ երկու առարկայից ևս կազմակերպելու մնացորդային գիտելիքների ստուգում, և/կամ, ըստ հնարավորության, դասալսումներ՝ նույն կուրսում նույն դասախոսի մոտ:

- [«Դուալ բարձրագույն կրթության կազմակերպման ուղեցույց» \(կատարված ԱՀԿ-ի հետ համատեղ\)](#)

Այս փաստաթուղթը [սահմանում է աշխատավայրում գործնական ուսուցման և ուսումնառության կազմակերպման](#) ընդհանուր շրջանակը: «Շրջանավարտների աշխատունակությունը բարձրացնելու նպատակով աշխատանքի վրա հիմնված ուսումնառության ներդրում Հայաստանի և Մոլդովայի բարձրագույն կրթության համակարգերում» (WBL4JOB) նախագծի շրջանակում ստեղծվել է դուալ բարձրագույն կրթության ընդհանրական ու ճկուն մոդել: ՇՊՀ-ում գործող [ԴԲԿ/ԱՀՈՒ-ի ուղեցույցը սահմանում է աշխատավայրում ուսուցման և ուսումնառության կազմակերպման](#) ընդհանուր շրջանակը, գործնական ուսուցման աշխատանքների տարեկան ժամանակացույցը և դրանց փոխատեղումը կազմակերպության տարբեր կառուցվածքային ստորաբաժանումներում:

Ավելին, նշենք, որ ԴԲԿ/ԱՀՈՒ-ի ծրագրային արդյունքների գնահատում կատարելիս ակնհայտ էր բարձրագույն կրթության ոլորտում նման փորձառության կարևորությունը, նախ այն հիմնավորմամբ, որ այդ մոդելի մշակման և ներդրման միջոցով ձեռնարկությունների/գործատուների ու բուհի միջև հաստատվում է սերտ համագործակցություն, և անհամեմատ բարձրանում է շրջանավարտների աշխատունակությունը՝ ընձեռնելով կարիերայի զարգացման իրական հնարավորություններ: Այս ուղեցույցը և փորձառությունը հիմքերը են ստեղծել, որ ՇՊՀ-ի ՌԾ-ում ամրագրված աշխատանքի վրա հիմնված առնվազն 3 ԿԾ-ների իրականացումը կազմակերպվի պատշաճ մակարդակով, և ԱՀՈՒ-ի ներդրման իրականացումը դիտարկվի որպես հնարավոր և կանոնակարգված իրատեսական ձեռնարկում: Փաստաթուղթը ներկա պահին գտնվում է լավարկման փուլում:

### **Լավարկված իրավական փաստաթղթեր**

- [«Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի կանոնադրություն](#) »

Սույն կանոնադրությունը ներկայացնում է բուհի ռազմավարական ծրագրով 3 հիմնական գործառնության պարտավորություններ կրող կենտրոններից «Որակյալ կրթություն» նպատակը ապահովող կենտրոնի հստակեցված գործառնությունները, կառավարման ուղղաձիգ և հորիզոնական կապերը: Օրինակ՝ Մինչբուհական կրթության կազմակերպման բաժնին է վերագրվում նախկինում ՈՒԳԿԿ -ին վերապահված գործառնությունների մի մասը՝ կապված քոլեջի և ավագ դպրոցի գործունեության հետ: Կամ՝ ՈՒԱԲԳՀ բաժնին է վերապահված պրակտիկաների կազմակերպման պատասխանատվությունը, իսկ վիճակագրական հաշվետվությունների իրականացումը այլևս վերապահված է ՈՒԳԿԿ-ին:

- [«Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի մասնագիտական կրթական ծրագրերի մշակման, հաստատման, մշտադիտարկման և վերանայման քաղաքականություն»](#)

Վերոնշյալ քաղաքականության մեջ ներկայացվել է ՄԿԾ-ի մասնագրի արդեն լավարկված կառուցվածքը, որը ներառում է մասնագիտության փիլիսոփայությունը և մտածելակերպը, բովանդակությունը, ուսումնական պլանը, ուսումնական գործընթացի նպատակները, խնդիրները, ակնկալվող վերջնարդյունքները, դրանցից բխող դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդները, իրականացման համար նյութատեխնիկական, մարդկային անհրաժեշտ ռեսուրսները, առարկայական և պրակտիկայի նկարագրիչները, շրջանավարտի ուսման հետագա հնարավորությունները: Կարևորվել է ՄԿԾ-ների ճկուն կառուցվածք ունենալու հանգամանքը՝ նկատի ունենալով կրթական կարիքների փոփոխություններին համահունչ արագ արձագանքման անհրաժեշտությունը, ինչպես նաև հետագոտամետ ՄԿԾ-ների իրականացման ապահովումը՝ ընդգծելով հետագոտական գործընթացը:

- [«Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ամբիոնի օրինակելի կանոնադրություն»](#)

Նշված փաստաթղթի լավարկումը պայմանավորված է, առաջին հերթին, ՄԿԾ պատասխանատուի ինստիտուտի ներդրմամբ: Ամբիոնի օրինակելի կանոնադրություն մեջ ամրագրվել է, թե ով կարող է լինել ՄԿԾ պատասխանատու, որոնք են նրա գործառնությունները, պարտականությունների և իրավունքների շրջանակները: Նշենք նաև, որ այս բնութագրումները արդեն մեկ անգամ լավարկվել են՝ նպատակ ունենալով առավել հստակեցնելու ՄԿԾ պատասխանատուների գործառնությունները:

- [«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամում բակալավրի առկա/հեռակա և մագիստրատուրայի առկա կրեդիտային կրթական ծրագրերով ուսումնառության արդյունքների գնահատման և բողոքարկման ընթացակարգ»](#)

1. Այս ընթացակարգը ենթարկվել է ձևաբովանդակային լավարկման, ավելին, կարելի է պնդել, որ ՇՊՀ-ն այլևս ունի սկզբունքորեն գնահատման նոր ընթացակարգ: Այսպես, առանձին գլխով ներկայացված են գնահատման տեսակները՝ տարբերակելով ձևավորող և միավորային գնահատումները: Միտում ունենալով քայլ առ քայլ անցնելու թեստային ստուգման՝ հստակեցվել են գնահատման ձևերը՝ գրավոր՝ ստուգողական աշխատանք, անհատական աշխատանք, թեստ՝ (ըստ անհրաժեշտության, օտար լեզուների դեպքում թեստերը կարող են ներառել նաև բանավոր բաղադրիչ), բանավոր, ցուցադրայի («Դեկորատիվ կիրառական արվեստ» կրթական ծրագրի համար), նորմատիվների հանձնում («Նախական զինվորական պատրաստություն», «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ» կրթական ծրագրերի համար): Մանրամասնորեն ներկայացված է գնահատման գործընթացը՝ հստակեցված գործոններով՝ բակալավրի առկա, հեռակա և մագիստրատուրայի առկա ուսուցման ծրագրերի համար: Կարևոր ենք համարում նշել, որ ուսումնառություն-հետազոտություն կապի ամրապնդման համար ուսումնական կիսամյակում շաբաթական լսարանային 3 ժամ ծանրաբեռնվածություն ունեցող մասնագիտական դասընթացներից անցկացվում է 2 ստուգում, որոնցից առաջինը՝ անհատական աշխատանք: Սկզբունքայնորեն կատարվել են լուրջ փոփոխություններ, այսպես՝ Անանուն ստուգումներ. ուսումնական կիսամյակի ընթացքում յուրաքանչյուր ՄԿԾ-ի շրջանակում առնվազն մեկ մասնագիտական և համահամալսարանական դասընթացների ստուգումներ անցկացվում են ծածկագրված տեսքերով: Ընդ որում, եթե տվյալ կուրսի մոտ անանուն ստուգումների արդյունքների միջին առաջադիմության և մասնագիտական/ համահամալսարանական մյուս դասընթացների միջին առաջադիմության տարբերությունը գերազանցում է 30%-ը, ապա հաջորդ կիսամյակում նույն կուրսի մոտ ևս մեկ մասնագիտական/համահամալսարանական դասընթացից կազմակերպվում է անանուն ստուգում: Արդյունքների նույնապիսի պատկերի դեպքում տվյալ կուրսի մոտ բոլոր դասընթացներից գրավոր ստուգումները հաջորդիվ անցկացվում են անանուն:

Կրկնակի ստուգում՝ ՈՒԳԿԿ-ի առաջարկությամբ յուրաքանչյուր ակադեմիական խմբի/կուրսի մոտ հատկապես ամենաբարձր և ամենացածր արդյունքներ գրանցած աշխատանքները լուծարային հանձնաժողովի կողմից ենթարկվում են կրկնակի ստուգման:

Գնահատման թափանցիկությունն ապահովվում է բողոքարկման լավարկված գործընթացի միջոցով. այսուհետ բողոքարկման ենթակա են քազմագործոնային գնահատման բոլոր բաղադրիչները՝ ակտիվությունը, անհատական

աշխատանքի ստուգումը, ստուգում 1-ը, ստուգում 2-ը, ամփոփիչ ստուգումը՝ հնարավորություն ընձեռելով այդ գործընթացն իրականացնելու առավել արդյունավետ, թափանցիկ:

Ավելացվել է նոր բաժին՝ «Գնահատման օբյեկտիվության, անաչառության և թափանցիկության ապահովման մեխանիզմներ» վերտառությամբ, որտեղ գնահատման վերոնշյալ հատկանիշներն ապահովվում են գնահատման գործընթացի ճկունությամբ, սուբյեկտիվության գործոնի նվազեցման մեխանիզմների կիրառմամբ: Գնահատման գործընթացի բարելավման շրջափուլի տևողությունը մեկ ուսումնական տարի է: Գնահատման գործընթացի բարելավման ոլորտները բացահայտելու համար հիմք են հանդիսացել գործընթացի մասնակիցներից ստացված վերլուծությունների արդյունքները և առաջարկները.

- յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին գնահատման ձևերի և առարկայական վերջնարդյունքների համապատասխանության մասին վերլուծություններ՝ կատարված ՄԿԾ մեթոդական խորհրդի կողմից,
- ՇՊՀ-ի Որակի ապահովման բաժնի կողմից ուսանողների շրջանում իրականացվող «ՊԴ կազմի մասնագիտական, մանկավարժական և կազմակերպչական կոմպետենցիաների գնահատման», ՊԴ կազմի շրջանում՝ «Դասախոսի մասնագիտական, մանկավարժական և կազմակերպչական կոմպետենցիաների զարգացման կարիքների գնահատման» (ինքնագնահատման) հարցումների արդյունքների վերլուծություն ՄԿԾ մեթոդական խորհրդի կողմից,
- ֆակուլտետի խորհրդում յուրաքանչյուր կիսամյակի ավարտին դեկանի կողմից ՄԿԾ-ների ուղղությամբ գնահատման գրանցված արդյունքների ամփոփումը՝ հիմք ընդունելով ուսումնական խորհրդատուների վերլուծությունները:

Գնահատման բարելավման արդյունքում կարող են փոխվել.

- գնահատման ձև/եր/ը (գրավոր, բանավոր),
- գնահատումն իրականացնող/ներ/ը,
- գնահատման սանդղակները/ռուբրիկները,
- և այլն:

Գնահատման բարելավման առաջարկությունները՝ քննարկված և հաստատված ամբիոնի նիստում, ներկայացվում են

ՈՒԳԿԿ:

Ակադեմիական խմբի/կուրսի մոտ տվյալ դասընթացից 90 և ավելի միավոր ընդհանուր առաջադիմության արդյունքի գրանցման դեպքում իրականացվում է մնացորդային գիտելիքի ստուգում:

ՈՒԳԿԿ-ի առաջարկությամբ յուրաքանչյուր ակադեմիական խմբի/կուրսի մոտ ամենաբարձր և ամենացածր արդյունքներ գրանցած աշխատանքները կարող են ենթարկվել կրկնակի ստուգման:

- [«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի մագիստրատուրայի և բակալավրի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման ընթացակարգ»](#)

Ընթացակարգում մասնավորապես փոփոխվել է ՄԹ-ի գնահատման ռուբրիկը՝ հավելելով այն հետևյալ բաղադրիչով . ուսանողի կողմից տպագրված/տպագրության փուլում գտնվող հոդվածի առկայություն (համահեղինակությամբ կամ առանց համահեղինակության)՝ 5 միավոր, և պարտադիր նշումով, որ հետազոտությունը կատարված է ՄԹ-ի շրջանակում: Նման մեխանիզմի կիրառումը կարևոր է համարվում նաև հետազոտության և ուսումնառության կապի ամրապնդման տեսանկյունից:

Սույն ընթացակարգի լավարկումներից մեկն էլ վերաբերում է ՄԹ-ի ղեկավարմանը: Դասախոս ղեկավարից զատ, ներդրվել է նաև [համաղեկավարի](#) ինստիտուտը, որի համար նկատի է առնվել երկու հիմնավորում՝

- առաջինը՝ մանկավարժի որակավորում շնորհող մասնագիտությունների առումով. քանի որ ՄԹ-ների թեմաները վերաբերում են դասավանդման և ուսուցման մեթոդիկաների կամ մանկավարժական ոլորտներին, կարծում ենք՝ նպատակահարմար կլինի, որ աշխատանքները ղեկավարեն և՛ դասախոս ղեկավարը, և՛ պրակտիկ աշխատող մանկավարժ համաղեկավարը,
  - երկրորդը՝ բոլոր մասնագիտությունների առումով. գործատուների հետ սերտ կապի ձևավորման և ամրապնդման համար կարծում ենք՝ նպատակահարմար կլինի, որ աշխատանքները ղեկավարեն և՛ դասախոս ղեկավարը, և՛ պրակտիկ փորձ ունեցող հաջողված գործատու-համաղեկավարը, որն առավելապես կնպաստի համակողմանի հետազոտության կատարմանը:
- [«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ուսանողների մնացորդային գիտելիքների ստուգման ընթացակարգ»](#)

Մույն ընթացակարգում ճշգրտվել են մնացորդային գիտելիքների ստուգման գործընթացի կազմակերպման հանգամանքները՝ իրականացման ժամանակահատվածը, ձևը, մասնակիցները, պայմանները: Այսպես, մնացորդային գիտելիքի ստուգում պարտադիր իրականացվում է այն կուրսերի մոտ, որոնք դասընթացի առումով 90 միավորից բարձր ընդհանուր առաջադիմության արդյունք է գրանցել: Կամ՝ ուսանողների մնացորդային գիտելիքների ստուգումն իրականացվում է ՈՒԳԿԿ-ի համակարգմամբ և վերահսկողությամբ՝ ամբիոնի վարիչի, ՄԿԾ պատասխանատուի և/կամ դասընթացը դասավանդող նույն և/ կամ այլ դասախոսի մասնակցությամբ: Ինչպես նաև Ուսանողների մնացորդային գիտելիքների ստուգման արդյունքները ներկայացվում են ուսանողներին, քննարկվում են ամբիոնի նիստում, ըստ անհրաժեշտության՝ ՄԿԾ-ի մեթոդական խորհրդի նիստում: Հստակեցվել են արդյունքների վերլուծության հետևանքները:

- [«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ակադեմիական ազնվության քաղաքականություն](#) և [«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի գրագողության դեմ պայքարի հայեցակարգ](#) (կատարված ԳՔՆԿ-ի հետ համատեղ)

Այս փուլում ՈՒԳԿԿ-ի համար գրագողության դեմ պայքարի քաղաքականությունը կապվում է շահառուների իրազեկվածության աստիճանի բարձրացման հետ՝ կիրառելով հստակ ամրագրված մեխանիզմներ: Այսպես՝ ՈՒԳԿԿ-ն և ԳՔՆԿ-ն համատեղ ջանքերով ուսանողների և ՊԴ կազմի համար համապատասխան մասնագետների ներգրավմամբ կազմակերպել/ու են տեղեկատվական սեմինարներ: Այդ միջոցառումները ներառված են կենտրոնների և ամբիոնների ամենամյա աշխատանքային պլաններում և, համաձայն [Ուսումնական խորհրդատուների գործունեության կարգի](#), մտնում են վերջիններիս ամրագրված պարտականությունների մեջ: Ուսումնական խորհրդատուները կանխարգելիչ նկատառումներով ուսանողներին իրազեկում են գրագողության դրսևորումների, ինչպես նաև կրթական համակարգում կոռուպցիոն ռիսկերի մասին: Հարկ է նշել նաև, որ համահամալսարանական «Իրավագիտություն» դասընթացի առարկայական բովանդակության լավարկման արդյունքում, որն արտահայտված է առարկայական նկարագրիչում, առանձին թեմաներ են հատկացված ակադեմիական ազնվության և գրագողության դեմ պայքարի խնդիրներին, և առանձին բաժին՝ կոռուպցիայի դեմ պայքարին: Ակադեմիական ազնվության և գրագողության դեմ պայքարի խնդիրներին մանրամասնորեն անդրադարձ է կատարվում նաև բակալավրի ԿԾ-ում նոր ներդրված «Մասնագիտական ոլորտում հետազոտական աշխատանքի իրականացման հիմունքներ» դասընթացի շրջանակում: ՇՊՀ-ն, սակայն, միայն վերոնշյալ միջոցառումներով չի բավարարվել: Մասնավորապես, կարևորելով որակյալ կրթության, ուսումնառության և

գիտահետազոտական գործունեության ապահովման առաջնահերթությունը՝ համագործակցության շրջանակներում բակալավրի և մագիստրոսի ԿԾ-ներով ուսումնառողների ավարտական աշխատանքների, ՄԹ-ների, ինչպես նաև տպագրվող գիտական հոդվածների ինքնատիպությունն ապահովելու, գրագողության դեպքերից խուսափելու, վերջիններիս քանակը նվազեցնելու և ակադեմիական ազնվության սկզբունքները պահպանելու նպատակով դիմելով ՀՀ ԲԿԳԿ-ին՝ ՇՊՀ-ի կողմից առաջարկվել է ՀՀ բուհերի համար ձևավորել միասնական բազա՝ հայալեզու ավարտական աշխատանքների և ՄԹ-ների, ինչպես նաև տպագրվող գիտական հոդվածների ինքնատիպությունն ստուգելու հնարավորությամբ /հիմքերը՝ ԳՔՆԿ-ում/:

• «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ուսումնական խորհրդատուների գործունեության կարգ»

Սույն կարգը լավարկվել է մասնավորապես ուսումնական խորհրդատուների իրավունքների և պարտականությունների հստակեցման տեսանկյունից: Նախ՝ նշենք, որ ուսումնական խորհրդատուները կցվում են կուրսին և իրենց գործունեությունն իրականացնում են ուսումնառության ողջ ընթացքում՝ առաջին կուրսից մինչև ավարտական կուրս՝ բակալավրում՝ 4, մագիստրատուրայում՝ 2 տարի ժամկետով: Ուսումնական խորհրդատուների պարտականությունները հստակեցվել են. ամսական առնվազն մեկ անգամ՝ դասատախտակով ամրագրված օրերին, հանդիպում են համապատասխան կուրսերի հետ՝ ապահովելով հետադարձ կապ: Իրականացվում են նաև տեղեկատվական-իրազեկման հանդիպումներ՝

- իրազեկելու ուսանողների իրավունքների և պարտականությունների մասին,
- ծանոթացնելու Հիմնադրամում գործող կրեդիտային համակարգին, գնահատման և բողոքարկման կարգին,
- իրազեկելու ուսման վարձավճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցման ձևով ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների տրամադրման կանոնակարգի մասին (Ուսանողների աջակցության, բուհ-գործատու համագործակցության բաժնի հետ համագործակցությամբ),
- իրազեկելու ուսանողների վարկանիշավորման և խրախուսման կանոնակարգի մասին (Ուսանողների աջակցության, բուհ-գործատու համագործակցության բաժնի հետ համագործակցությամբ),
- ծանոթացնելու մասնագիտական կրթական ծրագրին (ՄԿԾ), դրա վերջնաբեկումներին, իրականացման գործընթացին (ՄԿԾ պատասխանատուի հետ համագործակցությամբ),



- կանխարգելիչ նպատակներով իրազեկելու կրթական համակարգում կոռուպցիոն ռիսկերի և գրագողության դրսևորումների մասին,
- մասնակցել ուսանողների մնացորդային գիտելիքների ստուգման հանձնաժողով/ներ/ի աշխատանքներին,
- իրականացնելու մատենավարության հետ կապված իր գործառույթները,
- ըստ անհրաժեշտության ուսանողներին տրամադրելու տեղեկատվություն ուսուցման գործընթացում կատարվող փոփոխությունների մասին,
- քննաշրջանի ընթացքում հետևել ընդհանուր կուրսի, ինչպես նաև առանձին ուսանողների առաջընթացին՝ ըստ ուսման առաջադիմության տարբերակելով առաջադիմող, փորձաշրջանի կարգավիճակում գտնվող և հեռացման ենթակա ուսանողներին.
  - Ուսանողը առաջադիմող է, եթե հավաքել է տվյալ կիսամյակի համար ուսումնական ծրագրով սահմանված 30 կրեդիտը:
  - Ուսանողը փորձաշրջանի կարգավիճակում է, եթե չի բավարարել նախորդ կետում նշված պայմանը և համաձայն «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ուսանողների հեռացման (ազատման) և ուսանողական իրավունքների վերականգման» կանոնակարգի՝ հեռացման ենթակա չէ:
  - Ուսանողը ենթակա է հեռացման՝ համաձայն «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ուսանողների հեռացման (ազատման) և ուսանողական իրավունքների վերականգման կանոնակարգի», եթե փորձաշրջանի կարգավիճակում գտնվելով՝ կիսամյակի լուծարային շրջանի ավարտից հետո դուրս չի գալիս այդ կարգավիճակից:
- Հիմնական քննաշրջանի ավարտից հետո ուսումնական խորհրդատուն փորձաշրջանի կարգավիճակ ունեցող ուսանող/ներ/ի մասին իրազեկում է ամբիոնի վարիչին: Ամբիոնի վարիչի վերահսկողությամբ այդ ուսանող/ներ/ի համար իրականացվում է խորհրդատվություն: Խորհրդատվություն կազմակերպվում է նաև առաջին և երկրորդ լուծարային շրջանների միջև ընկած ժամանակահատվածում:
- Ուսումնական խորհրդատուն հետևում է ինչպես առանձին ուսանողների առաջընթացին, այնպես էլ կուրսի առաջադիմությանը:

- Եթե ուսանողի տարեկան ՄՈԳ-ը նվազում է 30%-ով, ապա ուսումնական խորհրդատուն վերջինիս ուղղորդում է Հիմնադրամի Սոցիալ-հոգեբանական կենտրոն:
- Եթե կուրսը առանձին առարկաներից ցուցաբերում է 50 միավորից ցածր ընդհանուր առաջադիմություն, ապա ուսանողներին ուղղորդում է Հիմնադրամի Սոցիալ-հոգեբանական կենտրոն և հարցը քննարկում ՄԿԾ մեթոդական խորհրդի նիստում:

• [ՇՊՀ-ի ուսանողի ուսումնառության ընդհատման և ուսանողական իրավունքների վերականգնման կանոնակարգ](#)»

Նշված կարգը լավարկվել է նախ՝ վերադաս իրավական ակտի փոփոխության պատճառով (փոփոխված՝ 22.12.2023թ.), ապա՝ որոշ էական լրացումներ են կատարվել գործընթացի կազմակերպման արդյունավետության աստիճանի տեսանկյունից: Այսպես՝ այլևս պաշտոնապես իրավական ակտով ամրագրված է, որ ուսանողի իրազեկումը կարող է կատարվել նաև էլեկտրոնային փոստի միջոցով:

• [«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ մատենավարության կարգ](#)»

Սույն կարգը լավարկվել է մասնավորապես գործընթացի կազմակերպման արդյունավետության և հստակության ապահովման նպատակով: Այսպես՝ մանրամասնվել են մատյանների պահպանման կանոնները:

Այս ամենով հանդերձ՝ առաջիկայում նախատեսվում է՝

- ✓ նկատի ունենալով ՄԿԾ-ների և շնորհվող որակավորումների վերաբերյալ թարմացված տեղեկատվության տարածման կարևորությունը՝ մշակել և ներդնել **«Դիմորդի ուղեցույց»** և **«Ուսանողի ուղեցույց»** էլեկտրոնային ձեռնարկները, որոնք հնարավորություն կտան թե՛ դիմորդներին և թե՛ ուսանողներին ստանալու ամփոփ, համապարփակ, հավաստի տեղեկատվություն բուհում գործող մասնագիտական կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի վերաբերյալ:
- ✓ Նկատի ունենալով անհատական/ստուգողական, կուրսային աշխատանքների միջոցով ուսանողների հետազոտական հմտությունների զարգացման կարևորությունը՝ լավարկել անհատական, կուրսային աշխատանքների կազմակերպման, իրականացման, գնահատման գործընթացին առնչվող մեխանիզմները, ընթացակարգերը:
- ✓ Ապրոբացիոն փուլից հետո, ըստ անհրաժեշտության, լավարկել արդեն իսկ ներդրված կարգերը, մեխանիզմները՝ հաշվետվողական տարբեր խողովակներից եկող հիմքերով:

## ԼԱՎԱՐԿՎԱԾ ԿԾ-ՆԵՐ

2021-2022 ուստարվա ավարտին ՄԿԾ-ների բարելավման գործընթացի մեկնարկն այլևս տրված էր (տե՛ս [Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի գործունեության հաշվետվություն 2021-2022 ուսումնական տարի](#)): ՄԿԾ-ների լավարկման համար ուղենշային հիմքեր են հանդիսացել՝

1. [«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցը \(2022թ.\), դրանում նշված դիտարկումները, եզրակացությունները ՄԿԾ-ների վերաբերյալ:](#)

Զեկույցում առանձնացվել են հետևյալ թերությունները՝

- ՄԿԾ-ների բարելավման ոչ հստակ մեխանիզմներ,
- կրեդիտների բաշխման ոչ հստակ քաղաքականություն,
- ՄԿԾ-ներում կամընտրական բաղադրիչի բացակայություն,
- ուսանողների մասնագիտական գործնական կարողությունների զարգացման թույլ հնարավորություններ,
- ուսանողների հետազոտական թույլ կարողություններ և ուսումնասիրություն ↔ հետազոտություն թույլ կապ,
- վերջնարդյունք ↔ դասավանդման մեթոդ ↔ ուսումնասիրության մեթոդ ↔ գնահատման մեթոդ /հանձնարարականներ ↔ ռեսուրսներ թույլ համահնչեցում,
- գնահատման համակարգում օբյեկտիվության և վերջնարդյունքահեն բաղադրիչների թույլ արտահայտվածություն,
- ակադեմիական ազնվության ապահովման ոչ բավարար միջոցառումներ,
- գրագողության դեմ պայքարի ոչ բավարար միջոցառումներ:

2. [ՇՊՀ-ի 2023-2027 թթ. Զարգացման ռազմավարական ծրագիրը:](#)

Ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցի եզրակացությունների ներքո 2022թ. հոկտեմբերին Կենտրոնը առաջարկել է Ռեկտորին (28.10.2022 թ.-ի Զեկույցագիր, մուտքի թիվ՝ 01-24 1812/1) դիմել ՀՀ ՈԱԱԿ-ին ՇՊՀ-ի ՊԴ կազմի համար ՄԿԾ-ների բարեփոխմանը ուղղված վերապատրաստումների իրականացման համար: ՀՀ ՈԱԱԿ-ի կողմից «ՄԿԾ-ների բարելավման մեխանիզմներ» թեմայով (2022թ.) վերապատրաստումներն իրականացվել են 2 փուլով, որոնց մասնակցել են ՇՊՀ-ի կենտրոնների և ՊԴ կազմի ներկայացուցիչները: Վերապատրաստումների առաջին փուլից հետո ՊԴ

ընդլայնված կազմի համար ՈՒԳԿԿ-ն կազմակերպել է հանդիպումներ (մասնակցության հիմքերը՝ ՈՒԳԿԿ-ում)՝ ամրապնդելու, ամբողջացնելու համար ձեռք բերված հմտությունները և քննարկելու բարելավման ընթացքը:

Կենտրոնի տնօրեն-պրոռեկտորի ԺՊ-ի համապատասխան հանձնարարականներով (20.01.2023թ.) մասնագիտական ամբիոններում բակալավրի կրթական ծրագրերի բարելավման գործընթացի կազմակերպման նպատակով ձևավորվել են ՄԿԾ-ների մեթոդական հանձնաժողովներ, որոնց կազմերը հաստատվել են ֆակուլտետների խորհուրդներում: Այդ հանձնաժողովներում ներառվել են ՊԴ կազմի, ուսանողների, շրջանավարտների և գործատուների ներկայացուցիչներ (հիմքերը՝ ամբիոններում և ՈՒԳԿԿ-ում): Մինչ ՄԿԾ-ների մեթոդական հանձնաժողովների աշխատանքների մեկնարկը ՈՒԳԿԿ-ի կողմից հանդիպումներ են կազմակերպվել մասնագիտական ամբիոնների վարիչների հետ՝ քննարկելու համար բարելավման ճանապարհային քարտեզը: Այդ հանդիպումների ժամանակ ներկայացվել է նաև **ՄԿԾ պատասխանատուի ինստիտուտի** ներդրման անհրաժեշտության հարցը, քննարկվել են վերջիններիս գործառույթները, պարտականությունների և իրավունքների շրջանակները: Քննարկումների արդյունքները հիմք են հանդիսացել ՇՊՀ-ի ամբիոնի օրինակելի կանոնադրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու համար (տե՛ս ՇՊՀ-ի [ամբիոնի օրինակելի կանոնադրության](#) 2.14 կետը՝ ենթակետորով):

2023թ. փետրվարի 1-ից մինչև փետրվարի 24-ը Կենտրոնի տնօրեն-պրոռեկտորի ԺՊ-ի կողմից կազմակերպվել են հանդիպումներ [ՄԿԾ-ների մեթոդական հանձնաժողովների հետ](#), ուղղված ՄԿԾ-ների բարելավմանը (հիմքերը՝ ամբիոններում և ՈՒԳԿԿ-ում): Հանդիպումների ժամանակ ՊԴ կազմի, ուսանողների, շրջանավարտների և գործատուների ներկայացուցիչների հետ արդյունավետ քննարկումներ են տեղի ունեցել բակալավրի ԿԾ-ների վերջնարդյունքների, ուսումնական պլանների, դասընթացների բովանդակային ընդգրկումների, հատկացվող կրեդիտների, դասընթացներում տեսական և գործնական ժամերի բաշխման և այլ հարցերի մասին: Ամբիոններին առաջարկվել է ՈՒԳԿԿ-ի կողմից մշակված «Կրթական ծրագրի բարելավման հիմնավորում» ձևաչափը՝ ընթացիկ իրավիճակը, բարելավումների անհրաժեշտությունը, նպատակը և բնույթը, ակնկալվող արդյունք/ները, կապը ՇՊՀ-ի Զարգացման ռազմավարական և ամբիոնի զարգացման ռազմավարության հետ համակարգված, առավել ակնհայտ, տեսանելի և առարկայական ներկայացնելու համար (**Հավելված 1**):

Կենտրոնի տնօրեն-պրոռեկտորի ԺՊ-ի համապատասխան հանձնարարականներով մասնագիտական ամբիոններում կազմակերպվել է թողարկվող ՄԿԾ-ների բենչմարքինգի իրականացման գործընթացը: ՀՀ և գործընկեր այլ բուհերի նույնական ՄԿԾ-ների հետ համեմատական վերլուծությունները կատարվել են ոչ պատահական ընտրությամբ, այլ ընտրողաբար՝

գործընկեր բուհերի, մասնավորապես, ԵՊՀ-ի, ՀՊՄՀ-ի, ՎՊՀ-ի համապատասխան կրթական ծրագրերի հետ (Գրություններ՝ 21.03.2023թ., էլքի թվեր՝ 01-24 167, 01-24 168, մուտքի թվեր՝ 22-04 516, 22-04 310): Երազմուս + շարժունության ծրագրի շրջանակներում հնարավոր է եղել նաև համեմատություններ անցկացնելու Ռուսիայի Սուչավայի Ստեֆան չել Մարեի, Իսպանիայի Վալլադոլիդի գործընկեր համալսարանների ուսումնական ծրագրերի հետ (հիմքերը՝ ամբիոններում և ՈւԳԿԿ-ում): 2023թ. մարտ-ապրիլ ամիսներին բենչմարքինգի հիման վրա ամբիոնները կատարել են նաև ՄԿԾ-ների SWOT վերլուծություններ: Նման վերլուծություններ կատարելու կարողությունների հզորացման համար ՈւԳԿԿ-ն Հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոնի աջակցությամբ իրականացել է մեկօրյա սեմինար (մասնակցության հիմքերը՝ ՈւԳԿԿ-ում):

ՄԿԾ-ները բարելավելիս հաշվի են առնվել աշխատաշուկայի կարիքները: Նշենք, որ 2022-2023 ուստարում ՈւԳԿԿ-ի կողմից մշակվել և ներդրվել է գործատուների շրջանում պրակտիկաների ավարտին իրականացվող հարցումների հարցաթերթ, որի միջոցով հնարավոր է դարձել հետևողականորեն և մշտապես դիտարկելու աշխատաշուկայի կարիքները և դրա պահանջներին համընթաց իրականացնելու կրթական ծրագրերի, դասընթացների բովանդակային փոփոխություններ: Պլանավորվել է, որ այդ հարցումները պետք է իրականացվեն յուրաքանչյուր կիսամյակ՝ պրակտիկայի ավարտից հետո: Հաշվետու տարում իրականացված հարցումների արդյունքներն համապատասխան գծապատկերներով ներկայացված են **Հավելված 2-ում**:

Նշենք, որ գործատուների շրջանում իրականացված հարցմանը մասնակցել է թվով 69 գործատու: Հարցվողների 85%-ը պատասխանել է, որ իրենց հաստատությունը հաճախակի է ընդունում մեր ուսանող-պրակտիկանտներին տարբեր ԿԾ-ով: Հարցմանը մասնակից հաստատությունների 96%-ում կան ՇՊՀ-ի շրջանավարտ աշխատակիցներ: Հարցման արդյունքում ակնհայտ է դարձել, որ աշխատանքի ընդունելիս գործատուների 40%-ը առավել մեծ ուշադրություն է դարձնում շրջանավարտների մասնագիտական գիտելիքներին, 28%-ը՝ հմտություններին, 23%-ը՝ կարողություններին, իսկ 9%՝ այլ գործոններին: ՇՊՀ-ի ուսանողների մասնագիտական գործնական կարողությունների և հմտությունների ձևավորման համար պրակտիկայի տևողությունը գնահատելիս հարցվողների 51%-ը համարում է այն բավարար, 49 %-ը՝ ոչ: Գործատուների 84%-ը գտնում է, որ ՇՊՀ-ի ուսանողներն ունեն անհրաժեշտ նախապատրաստվածություն պրակտիկայի համար: Հարցման ընթացքում պարզվել է, որ բուհի ուսանողները մասնագիտական խորհրդատվության նպատակով դիմում են գործատուներին, իսկ առավել հաճախ՝ մեթոդական, ինչպես օրինակ՝ դասի պլանավորման, մեթոդների ընտրության, ինչպես նաև սովորողների հետ համագործակցության կազմակերպման և այլ հարցերով: Հարցմանը մասնակից գործատուների 72%-ը ծանոթ է ՇՊՀ-ի

պրակտիկայի մեթոդիստ-դասախոսների գործառնություններին: Գործատուների 99%-ը պրակտիկայի ավարտից հետո ցանկություն է հայտնել ՇՊՀ-ի ուսանողներին տեսնելու իրենց հաստատությունում՝ որպես աշխատակից: ՇՊՀ-ի ուսանողների կողմից իրականացված աշխատանքները և միջոցառումները գործատուների 41%-ը գնահատել է գերազանց, 48%-ը՝ լավ, 12%-ը՝ բավարար:

Բուհի վարչարարության կազմակերպման տեսանկյունից կարևոր է, որ ՇՊՀ-ի պրակտիկայի ղեկավար-մեթոդիստների ընդհանուր աշխատանքը պրակտիկայի ընթացքում գործատուների 52%-ը գնահատել է գերազանց, 29%-ը՝ լավ, 13%-ը՝ բավարար, իսկ ՇՊՀ-ի պրակտիկայի պատասխանատուի կողմից իրականացվող աշխատանքը 61%-ը գնահատել է գերազանց, 29%-ը՝ լավ: Գործատուների 98,5%-ը նշել է, որ ՇՊՀ-ի մեթոդիստ-ղեկավարների կողմից պրակտիկայի ընթացքում անհարկի միջամտություններ չեն եղել: Կարևոր է, որ ՇՊՀ-ի հետ համագործակցությունը պրակտիկայի հարցում գործատուների 61%-ը գնահատել է գերազանց, 23 %-ը՝ լավ, 6%-ը՝ բավարար: Հարցմանը մասնակիցների 98,5%-ը լիովին բավարարված է ՇՊՀ-ի կողմից պրակտիկայի կազմակերպման գործընթացից:

Նշված ցուցանիշները, ընդհանուր առմամբ, գոհացուցիչ են, սակայն այստեղ խնդիր ենք տեսնում ուսանողների մեթոդական պատրաստվածության, գործնական հմտությունների զարգացման և աշխատանքային իրական միջավայրում մասնագիտական գործունեության ծավալման տեսանկյուններից, ինչպես նաև պրակտիկայի տևողությունից: Այս բոլոր դիտարկումները հաշվի են առնվել ՄԿԾ-ների բարելավման ընթացքում:

ՄԿԾ-ների բարելավման համար հիմք են հանդիսացել ինչպես 2022-2023 ուստարվա, այնպես էլ նախորդ տարիների ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվությունների վերլուծությունները:

2022-2023 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կողմից կատարվել են մի շարք դիտարկումներ, որոնք քննարկվել են մասնագիտական ամբիոններում: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվություններում ներկայացված որոշ դիտարկումներ կանոնակարգային փոփոխությունների հիմք են դարձել: Ինչպես օրինակ՝ հանձնաժողովներն առաջ են քաշել մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների ընտրության, դրանցում հետազոտական բաղադրիչի ծավալի հարցերը: Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների ընտրության ժամանակ արդեն երկրորդ տարին է, ինչ ՈՒԳԿԿ-ի համագործակցային և հետևողական աշխատանքի շնորհիվ իրականացվող թեմաները միտված են կրթական ծրագրերի վերջնարդյունքներին:

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կողմից բարձրացվել է նաև նշված աշխատանքներում տեսական և կիրառական բաղադրիչների համամասնության պահպանման հարցը: Նշենք նաև, որ հանձնաժողովների կողմից նկատվել է ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի հետազոտական բաղադրիչի թույլ դրսևորումը: Այս բոլոր դիտարկումները հաշվի են առնվել և իրենց դրսևորումն են գտել ՄԿԾ-ների բարելավման գործընթացում, մասնավորապես [գնահատման և բողոքարկման, շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման ընթացակարգերում](#):

ՄԿԾ-ների բարելավման գործընթացի արդյունավետության ապահովման համար 2023թ. -ի հունիսի 5-ից 17-ն ՈՒԳԿԿ-ի կողմից ՇՊՀ-ի ներքին ռեսուրսներով [«ՄԿԾ-ների բարելավում. մեխանիզմներ և գործիքակազմ»](#) թեմայով վերապատրաստումներ են իրականացվել (վերապատրաստման ծրագիր-օրակարգը՝ [Հավելված 3](#)), որի ընթացքում ոչ միայն ներկայացվել է ՄԿԾ-ների բարելավման մեթոդաբանությունը, այլև ՄԿԾ-ների առկա վիճակի վերլուծությունը: [Նշված վերապատրաստմանը](#) մասնակցել է ՇՊՀ-ի ՊԴ կազմի 48%-ը (մասնակցության հիմքերը՝ ՈՒԳԿԿ-ում): Վերապատրաստումների ընթացքում մասնագիտական հանրային քննարկմանն է ներկայացվել ՈՒԳԿԿ-ի կողմից լավարկված ՄԿԾ-ի մասնագրի, առարկայական նկարագրիչի, ԹՕՊ-ի նոր ձևաչափերը, ինչպես նաև «Շիրա կի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամում բենչմարքինգի իրականացման մեթոդաբանություն» փաստաթղթի աշխատանքային տարբերակը: Այս փուլում ձևաչափային լավարկումները բարելավեցին ՄԿԾ-ների մասնագրերի բովանդակային ամբողջականությունը, հստակությունը, նոր տեղեկատվություն առարկայական նկարագրիչում և ԹՕՊ-ում. ինչպես՝ տեղեկատվություն

Առարկայական նկարագրիչում

- ✓ դասախոսին ներկայացվող պահանջների մասին,
- ✓ տվյալ դասընթացով ձևավորվող վերջնարդյունքների և ՄԿԾ-ի վերջնարդյունքի հետ կապի մասին,
- ✓ դասավանդման և ուսումնառության մեթոդների մասին,
- ✓ առանձին գնահատման մեթոդների և ձևերի մասին,
- ✓ դասընթացի կիրառելիության շրջանակի մասին,
- ✓ կրեդիտների հատկացման հիմնավորման մասին,  
ԹՕՊ-ում՝
- ✓ ուսանողին ներկայացվող լսարանային և ինքնուրույն առաջադրանքների մասին առանձին-առանձին,

- ✓ դասընթացի յուրաքանչյուր բաժնի/թեմայի վերջնարդյունքների և ստուգման հանձնարարականների մասին,
- ✓ դասընթացի վերջնարդյունքների և դասավանդման, ուսումնառության, գնահատման մեթոդների, հանձնարարականների, ռեսուրսների (ԷԴՓ, հիմնական գրականություն և այլն) համապատասխանության մասին,
- ✓ հանձնարարականների և դրանց արժանահավատ, օբյեկտիվ, չափելի, ուսանողի համար թափանցիկ գնահատման ռուբրիկների կիրառման մասին և այլն:

Վերապատրաստման ընթացքում ներկայացվել և քննարկվել են նաև ՄԿԾ-ների կառավարման հարցերը: Այս համատեքստում հիմնավորվել է բակալավրի կրթական ծրագրերի ուսումնական բազային պլանների նոր ձևաչափի ներդրման անհրաժեշտությունը, ինչպես նաև ներկայացվել են բազային և աշխատանքային պլանների առանձնացման նպատակները, ուսպլաններում դասընթացների կրթամասերի տարանջատման անհրաժեշտության հիմնավորումները:

Նշված վերապատրաստումից հետո հետադարձ կապի ապահովման նպատակով մասնակիցների շրջանում առցանց հարցումներ են իրականացվել (հիմքերը՝ ՈՒԳԿԿ-ում), որոնց արդյունքում պարզվել է, որ ՊԴ կազմի մեծ մասը կարիք ունի մանկավարժական կարողությունների հզորացմանն ուղղված վերապատրաստման: 19.06.2023թ.-21.06.2023թ. ՈւԳԿԿ-ի կողմից (Զեկուցագիր՝ 12.06.2023թ.) Մանկավարժության ամբիոնի առաջատար մասնագետների աջակցությամբ կազմակերպվել է 6 ադադեմիական ժամ տևողությամբ վերապատրաստում՝ ՊԴ կազմի մանկավարժական հմտությունների, կարողությունների զարգացման համար, մասնավորապես, վերջնարդյունքներին համապատասխան դասավանդման, ուսումնառության, գնահատման մեթոդների ընտրության խնդիրների մասին:

Վերոնշյալ վերապատրաստումների վերջնարդյունքների ձեռքբերումը չափվել է յուրաքանչյուր մասնակից դասախոսի կողմից կատարված գործնական առաջադրանքով, այն է՝ նոր պահանջներին համապատասխան առարկայական մեկ նկարագրիչի, դրա ԹՕՊ-ի, հանձնարարականների **հավելվածի** ներկայացումով: Վերապատրաստման արդյունքում 79 դասախոս ստացել է «Հավաստագիր», իսկ 39-ը՝ «Մասնակցության վկայագիր»: Նշենք նաև, որ վերապատրաստումներին մասնակցել են նաև վարչական աշխատակազմի ներկայացուցիչներ:



## ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Վերոնշյալ հիմքերը դիտարկելով որպես կողմնորոշիչ՝ առանձնացնացվել են բարելավման հիմնական ուղղությունները և հաշվետու ժամանակահատվածում մասնագիտական ամբիոնների հետ համագործակցության արդյունքում ուղենշվել է բակալավրի ԿԾ-ների բարելավման ճանապարհային քարտեզը:

Ստորև ներկայացնում ենք այն քայլերը, որոնք հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են.

➤ Նախ՝ ձևաչափային և բովանդակային բարելավման են ենթարկվել բակալավրի ԿԾ-ների մասնագրերը, ուսումնական պլանները՝ տարբերակելով բազային և աշխատանքային տեսակները: Այսօր բարելավման գործընթացի արդյունքում բակալավրի ԿԾ-ներն ունեն մասնագրեր, որոնց կառուցվածքը ներառում է մասնագիտության նկարագիրը՝ ըստ ուսումնառության արդյունքների և շնորհվող որակավորումների: Դրանցում մանրամասն և հստակ նկարագրված են մասնագիտության փիլիսոփայությունը, ԿԾ-ի նպատակը, խնդիրները և վերջնարդյունքները, դրանցից բխող առարկայական նկարագրիչները՝ դասավանդման, ուսումնառության, գնահատման ամրագրված մեթոդներով և անհրաժեշտ ռեսուրսների հայտագրումով: Մասնագրերում ամրագրված են նաև ՄԿԾ-ներն իրականացնող դասախոսներին ներկայացվող պահանջները, ինչպես նաև տեղեկատվություն շրջանավարտների հետագա ուսումնառության և աշխատաշուկայում մասնագիտական գործունեության ծավալման հնարավորությունների վերաբերյալ: Լավարկվել է ՄԿԾ-ների քարտեզագրումը՝ ապահովելով ՄԿԾ-ների վերջնարդյունքների և դասընթացների վերջնարդյունքների համահնչեցումը:

Նշենք, որ կիրառության մեջ դրված բազային ուսումնական պլանները իրենց մեջ ներառում են ուսումնառության 4 տարիների ժամանակակարգը, առանձնացված կրթամասերով դասընթացների ցանկը՝ համապատասխան կրեդիտներով, լսարանային և արտալսարանային ժամերի նշումով: Ի տարբերություն բազային պլանների՝ աշխատանքային տարբերակներում առարկայացանկերը ներկայացված են առանձին կիսամյակներով և ստուգման ձևերով:

Բակալավրի ԿԾ-ների մասնագրերի, ուսումնական պլանների բարելավման համար ելակետային նշանակություն է ունեցել ոչ միայն ՈԱՇ-ը, այլև առանձին ԿԾ-ների հաստատված ՈՈՇ-ները՝ վերջնարդյունքների սահմանման համար դառնալով կողմնորոշիչ: Սակայն սա չի նշանակում, թե կատարվել է վերջնարդյունքների ուղղակի պատճենում: ՈՈՇ-ի հենքի վրա ՇՊՀ-ն իր ինքնավարության շրջանակում սահմանել է տրամաբանորեն հիմնավորված և մասնագիտությունների փիլիսոփայությանը համահունչ բնութագրիչներ, ինչպես, օրինակ, «Մասնագիտական մանկավարժություն» ՈՈՇ-ի

բնութագրի պարագայում: ՄԿԾ-ների համար ստեղծվել են առանձին փաստաթղթեր, որոնցում տեսանելի կերպով ներկայացված են ՇՊՀ-ի կողմից շնորհվող որակավորումների բնութագրերը, դրանց ձեռքբերումն ապահովվող դասընթացները, պրակտիկաները և այլն: Ավելին, որոշ ՄԿԾ-ների ՈՈՇ-ներ, օրինակ՝ «Սերվիս» ԿԾ-ի, լինելով մասնակիորեն թույլ հիմնավորված և ձևակերպված, ՇՊՀ-ի մասնագիտական հանրային կողմից ուսումնասիրվել, գործատուների հետ քննարկվել է, և արդյունքում ձևակերպվել են այնպիսի վերջնարդյունքներ, որոնք առավել մանրամասն և ամբողջական են ներկայացնում մասնագիտության փիլիսոփայությունը: Իսկ այն ԿԾ-ների վերջնարդյունքները, որոնց ՈՈՇ-ները դեռևս չկան, ձևակերպվել են՝ ելակետ ունենալով ընդգծված կապակցվածությունը ՈԱՇ-ի համապատասխան մակարդակի արդյունքներին և մասնագիտության փիլիսոփայությանը:

➤ Ուսումնական պլաններում կատարվել է դասընթացների առանձնացում կրթամասերով՝ նպատակ ունենալով առավել տեսանելի և հիմնավոր դարձնելու ակնկալվող վերջնարդյունքները և բարելավելու ՄԿԾ-ների կառավարման գործընթացը: Օրինակ, ՄԿԾ-ներն այլևս ներկայացված են հետևյալ կրթամասերով՝

1. համահամալսարանական՝ ընդհանուր հումանիտար և հասարակագիտական կրթամաս,
2. համահամալսարանական՝ բնագիտական կրթամաս,
3. մասնագիտական կրթամաս,
- 3.1. ընդհանուր/ հատուկ մասնագիտական կրթամաս,
- 3.2. կամընտրական կրթամաս,
4. հետազոտական կրթամաս:

Տարբեր ՄԿԾ-ներում համահամալսարանական կրթամասերի նույնական դասընթացների համար որդեգրվել է սահմանել նույնական կամ համադրելի վերջնարդյունքներ՝ ՄԿԾ-ներով շնորհվող վերջնարդյունքներին համապատասխան:

➤ Ելակետ ունենալով կրթական վերջնարդյունքները՝ ՄԿԾ-ներում փոփոխվել է դասընթացների ցանկը: Նպատակ ունենալով ապահովելու ԿԾ-ների բովանդակության և վերջնարդյունքների համապատասխանությունը շնորհվող որակավորումների պահանջներին՝ ներդրվել են նոր դասընթացներ, իսկ որոշ դասընթացների իրականացումը դիտվել է աննպատակահարմար: Օրինակ՝ 011401.01.6 «Կենսաբանություն» և 011401.03.6 «Աշխարհագրություն» ԿԾ-

ներում ծրագրային վերջնարդյունքների ապահովման համար ներդրվել է «Ընդհանուր բնագիտության հիմունքներ» դասընթացը:

- Բակլավրի ԿԾ-ների ուսումնական պլանների բարելավման գործընթացում որդեգրվել է կրեդիտների բաշխման հստակ քաղաքականություն: Յուրաքանչյուր առարկայի կրեդիտը որոշվել է այդ դասընթացի ուղղությամբ լսարանային ժամերի և միջին կարողություններով ուսանողին անհրաժեշտ ինքնուրույն մոտավոր ժամաքանակի հաշվառմամբ, որն ուղղակիորեն բխում է նաև կիրառվող դասավանդման և ուսումնառության մեթոդներից: Այս ամենը ներառվել է յուրաքանչյուր դասընթացի համար ամրագրված առանձին առարկայական նկարագրիչ/ներ/ում, որտեղ առանձին բաժնով ներկայացված է «Կրեդիտների հատկացման հիմնավորումը»: Նշենք նաև, որ կրեդիտների բաշխման քաղաքականության հստակեցման համար կարևոր նշանակություն է ունեցել Էրազմուս+ «Աջակցություն անգլերենով դասավանդելու նորարարական մեթոդաբանությանը, մոտեցումներին և գործիքակազմի կիրառմանը՝ կրթության արդյունավետությունը, կայունությունը և միջազգայնացումը բարելավելու նպատակով»- SMARTI ծրագիրը, որի առանձնացված խնդիրներից էր ԵՄ գործընկեր Մեծ Բրիտանիայի Լիվերպուլի Ջոն Մուրի համալսարանի փորձի հիման վրա դասընթացների/մոդուլների կրեդիտների հատկացման սկզբունքների ուսումնասիրումը: Ըստ այդմ, ծրագրային արդյունքները ներկայացվել են ՇՊՀ-ի հանրային, մասնավորապես՝ ամբիոնների վարիչներին, ՊԴ կազմին ([2023թ. ապրիլ](#))՝ դառնալով ակտիվ քննարկման առարկա և կրեդիտների բաշխման որդեգրված մոտեցման ամրապնդում:
- Ուսումնական պլանների բարելավման գործընթացում կարևորվել է նաև դասընթացների անհրաժեշտ հաջորդական կապի և ողջամիտ շարունակականության ապահովումը՝ վերջնարդյունքների պատշաճ ձեռքբերման նպատակով: Օրինակ՝ 011401.21.6 «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության ԿԾ-ում «Բառագիտություն» դասընթացը 6-րդ կիսամյակից տեղափոխվել է 5-րդ կիսամյակ, իսկ «Լեզվի պատմություն» դասընթացը, որի նախապայման-դասընթացներից մեկն էլ «Բառագիտություն»-ն է, 4-րդ կիսամյակից՝ 6-րդ կիսամյակ՝ նպատակ ունենալով ապահովելու դասընթացների շարունակականությունը և տրամաբանական հաջորդականությունը:
- Բարելավման ընթացքում առանձնակի ուշադրությամբ քննարկվել են ուսանողների հետազոտական կարողությունների զարգացման և ուսումնառություն ↔ հետազոտություն կապի ամրապնդման խնդիրները: Արդյունքում բակլավրի բոլոր ԿԾ-ների 4-րդ կիսամյակում ներդրվել է հստակեցված առարկայական

վերջնարդյունքներով առանձին դասընթաց՝ «Մասնագիտական ոլորտում հետազոտական աշխատանքի իրականացման հիմունքներ» (2 կրեդիտ, շաբաթական 2 ժամ ծանրաբեռնվածություն): Նշված դասընթացը նախորդում է կուրսային, ավարտական աշխատանքների իրականացման ժամանակահատվածին:

- Բակալավրի ԿԾ-ների բավարար ճկունության ապահովման նպատակով բոլոր ԿԾ-ների մասնագիտական կրթամասերում ներդրվել է Կամընտրական դասընթաց (3 կրեդիտ, շաբաթական 3 ժամ ծանրաբեռնվածություն)՝ նպատակ հետապնդելով.
  - զարգացնելու ուսանողների մասնագիտական կարողությունները,
  - նպաստելու ուսանողների ակադեմիական շարժունությանը,
  - բավարարելու աշխատաշուկայի փոփոխվող պահանջները և ուսանողների կարիքները:
- Ուսանողների մասնագիտական գործնական կարողությունների գորացման նպատակով ավելացվել է պրակտիկաների տևողությունը՝ 6-րդ կիսամյակի չորսշաբաթյա պրակտիկան դարձնելով հինգշաբաթյա: Այս նույն նպատակով դասընթացների վերջնարդյունքներով պայմանավորված՝ լսարանային ժամերի վերաբաշխման ժամանակ գործնական, սեմինար, լաբորատոր աշխատանքներին, ըստ անհրաժեշտության, ավելի մեծ ժամաքանակ է հատկացվել: Օրինակ՝ «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության բակալավրի ԿԾ-ի լավարկման ժամանակ, հաշվի առնելով նաև ուսանողների առաջարկությունը, «Անգլերեն լեզու (բանավոր խոսք)» դասընթացի գործնական ժամաքանակը ավելացվել է՝ 128-ից դառնալով 144 /հիմքերը՝ ամբիոնում/: Կամ՝ «Սերվիս» մասնագիտության բակալավրի ԿԾ-ի լավարկման ժամանակ, հաշվի առնելով նաև ուսանողների առաջարկությունը, «Օտար լեզու (մասնագիտական ոլորտում)» դասընթացի գործնական ժամաքանակը (նաև մոդուլների քանակը) ավելացվել է՝ 380-ից դառնալով 444 /հիմքերը՝ ամբիոնում/: Վերոգրյալ օրինակները կրկին փաստում են, որ ուսանողներն անմիջական մասնակցություն են ունեցել իրենց վերաբերվող որոշումների կայացմանը՝ մասնակցելով ՄԿԾ-ների մեթոդական հանձնաժողովների աշխատանքներին:
- Բարելավումն հասել է մինչև դասընթացների բովանդակային, թեմատիկ մակարդակ: Այսպես՝ ակադեմիական ազնվության ապահովման և գրագողության դեմ արդյունավետ պայքարի համար ՈՒԳԿԿ-ի առաջարկությամբ առանձին դասընթացների բովանդակության մեջ ներառվել են վերջիններիս վերաբերող թեմաներ, ինչպես օրինակ՝

«Մասնագիտական ոլորտում հետազոտական աշխատանքի իրականացման հիմունքներ», «ՏՀՏ-ները մասնագիտական ոլորտում», «Իրավագիտություն» համահամալսարանական դասընթացներում:

Այս ամենի արդյունքում ՈՒԳԿԿ-ի կողմից հաշվետու 2023թ.-ին ՇՊՀ-ի Գիտական խորհրդի հաստատմանն են ներկայացվել բակալավրի (առկա/հեռակա) ուսումնական պլանները ([ԳԽ-ի 04.07.2023թ. թիվ 10 նիստի 10.2 որոշում](#), [ԳԽ-ի 31.08.2023թ. թիվ 12 նիստի որոշում 12.1](#), [ԳԽ 19.09.2023թ. թիվ 01 նիստի որոշում 01.2](#)):

Այս ամենով հանդերձ՝ հավելենք, որ **մագիստրոսի ԿԾ-ների** լավարկման գործընթացը մեկնարկել է 2024 թ.-ին, և այն իրականացվելու է համաձայն [ՄԿԾ-ների կառավարման հայեցակարգի](#):

### Աշխատանքի վրա հիմնված առնվազն 3 կրթական ծրագրեր

Erasmus + ծրագրի WBL4JOB նախագիծի իրականացումը նպատակ է ունեցել աջակցելու Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում ԴԲԿ/ԱՀՈԻ-ի ներդրմանը, իսկ ՇՊՀ-ն այդ ծրագրի մասնակիցներից մեկն է: Բուհում ստեղծվել է դուրալ բարձրագույն կրթության ընդհանրական ու ճկուն մոդել «Կառավարում» (ըստ ոլորտների) մասնագիտության 4-րդ կուրսում՝ «Բանկային գործ և ապահովագրություն» ԿԾ-ով: ՇՊՀ-ում գործում է [ԴԲԿ/ԱՀՈԻ-ի ուղեցույցը, որը սահմանում է աշխատավայրում ուսուցման և ուսումնառության կազմակերպման](#) ընդհանուր շրջանակը, այն է՝ ըստ դասավանդվող առարկաների աշխատավայրում աշխատանքի հիման վրա գործնական ուսուցման կազմակերպումը, գործնական ուսուցման աշխատանքների տարեկան ժամանակացույցը և դրանց փոխատեղումը կազմակերպության տարբեր կառուցվածքային ստորաբաժանումներում:

ՇՊՀ-ն ամենաակտիվ մասնակցությունն է ունեցել «Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգում 2024-2030 թթ. աշխատանքի վրա հիմնված ուսումնառության (ԱՀՈԻ) զարգացման հայեցակարգի և ճանապարհային քարտեզի» ստեղծման գործընթացում: Նշենք նաև, որ վերոնշյալ ծրագրի ֆինանսավորման ավարտին նախատեսվում է ունենալ հետևյալ երկարաժամկետ արդյունքները.

- ԱՀՈԻ քաղաքականության և իրականացման գործիքակազմ,
- ԱՀՈԻ/դուրալ կրթության քաղաքականության, կառուցակարգերի և գործիքների գծով 52 վերապատրաստված անձնակազմ,
- ԱՀՈԻ շրջանակում դասավանդման և ուսումնառության գծով 60 վերապատրաստված դասախոս/մենտոր,

- Բարձրագույն կրթության համակարգերում ԱՀՈԻ-ի ներդրմանն անհրաժեշտ ազգային քաղաքականություն,
- Դուալ բարձրագույն կրթության ընդհանրական ու ճկուն 2 մոդել՝ ներառյալ դուալ կրթությամբ «Բանկային գործ և ապահովագրություն» մասնագիտացմամբ (ԲԳԱՄ) բակալավրիատի ավարտական տարվա կրթական ծրագիր,
- ԱՀՈԻ ներդրմանն անհրաժեշտ փոփոխություններ ազգային օրենսդրություններում:  
Վերոնշյալ գործոնները ստեղծել են ինստիտուցիոնալ մակարդակով կարգավորվող պայմաններ, որպեսզի ՇՊՀ-ն կարողանա հասնել իր ռազմավարական կատարողական համապատասխան ցուցիչի ձեռքբերմանը: Ավելին, ճիշտ է՝ ԱՀՈԻ-ի ծրագրի պիլոտային փուլը ավարտվել էր 2022-2023 ուստարում, սակայն գործատուների հետ ձևավորված փոխվստահության միջավայրը նպաստեց, որ 2023-2024 ուստարում շարունակվի համագործակցությունը, և ԱՀՈԻ-ի ծրագիրը իրականացվում է նաև 2023-2024 ուստարում:  
Նշենք նաև, որ նախնական քննարկումներ են իրականացվել գործատուների հետ « 092301.01.6 Սոցիալական աշխատանք», «101801.01.6 Սերվիս» ԿԾ-ներ ի ուղղությամբ ԱՀՈԻ-ի իրականացման համար:

**Գործատուների և ուսանողների՝ համալսարանում ստացած կրթությունից բավարարվածության մակարդակի բարձրացում**

Գործատուների բավարարվածության մակարդակը հաշվետու տարում որոշվել է պրակտիկայի ավարտից հետո գործատուների շրջանում ՈՒԳԿԿ-ի կողմից անցկացված հարցումների միջոցով, որի արդյունքների ամփոփումը մանրամասնորեն ներկայացված է սույն հաշվետվության «**Լավարկված ԿԾ-ներ**» բաժնում: Ուսանողների բավարարվածության մակարդակի մասին տեղեկատվությունը նախատեսվում է անցկացնել ընթացիկ ուստարվա ավարտին և ստացված արդյունքները համեմատել յուրաքանչյուր նախորդ տարվա ստացված արդյունքների հետ: Գործընթացը պահանջում է ավելի մեծ ժամանակահատված՝ հավաստի տեղեկատվություն ստանալու համար:

### Խիստ թերբեռնված կուրսերի քանակի կրճատում

Հաշվետու 2022-2023 ուստարում ՇՊՀ-ն, ներկայացնելով 2023-2024 ուստարվա բակալավրի կրթական ծրագրով առկա/հեռակա ուսուցման ըստ մասնագիտությունների /կրթական ծրագիր/ և ուսման վարձերի ընդունելության հայտերը, թերբեռնված կուրսերով առանձին մասնագիտությունների հայտագրումից հրաժարվել է, ինչպես օրինակ՝ 054201.02.6 Քարտեզագրություն և կադաստրային գործ, 032101.01.6 Լրագրություն: Նշենք նաև, որ նման որոշման հիմք է եղել վերջին չորս տարիների ուսանողական համակազմի թվաքանակի համեմատությունը:

### ՄԿԾ-ների պատասխանատուների հստակեցված գործառույթներ

ՄԿԾ-ների պատասխանատուների գործառույթների հստակեցման նպատակով Կենտրոնի կողմից ձեռնարկվել են մի շարք քայլեր.

- Ամբիոններին տրվել են հանձնարարականներ՝ կազմակերպելու քննարկումներ և տալու առաջարկներ:
- Կենտրոնի փոխտնօրենին եղել է հանձնարարական՝ ուսումնասիրելու գործունեության դաշտը:
- Ամբիոնի վարիչներից կազմվել է խումբ և Կենտրոնի տնօրեն-պրոռեկտորի հետ մշակվել են ՄԿԾ պատասխանատուների գործառույթները:

Արդեն ձևավորված առաջարկությունը ներկայացվել է Ռեկտորին, ապա տեղադրվել «Նախագծերի քննարկում» պատուհան՝ հաջորդիվ ներկայացվելով Գիտական խորհրդի հաստատմանը:

Նշենք նաև, որ ՄԿԾ պատասխանատուների գործառույթները այս ընթացքում ավելի են որոշակիացել տարբեր գործընթացներում նրանց ներգրավվածությամբ և համապատասխան դերակատարությամբ: Այսպես՝

- [«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամում մասնագիտական կրթական ծրագրերի կառավարման հայեցակարգ \(կատարված՝ ՈՒԳԿԿ-ի կողմից\)](#)՝ 2. 5 կետը՝ իր 7 ենթակետերով:

- [«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ուսանողների մնացորդային գիտելիքների ստուգման ընթացակարգ/նոր խմբագրությամբ/` 4.2 կետը:](#)
- [«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամում բակալավրի առկա/հեռակա և մագիստրատուրայի առկա կրեդիտային կրթական ծրագրերով ուսումնառության արդյունքների գնահատման և բողոքարկման ընթացակարգ` 6.2.կետը և այլն:](#)

### ՄԿԾ-ներում բազմազանեցված կամրնտրական բաղադրիչներ

ՄԿԾ-ների բավարար ճկունության ապահովման համար հաշվետու տարում բոլոր ՄԿԾ-ների մասնագիտական կրթամասերում արդեն ներդրվել է Կամրնտրական դասընթաց (3 կրեդիտ, շաբաթական 3 ժամ ծանրաբեռնվածություն)` նպատակ հետապնդելով.

- զարգացնելու ուսանողների մասնագիտական կարողությունները,
- նպաստելու ուսանողների ակադեմիական շարժունությանը,
- բավարարելու աշխատաշուկայի փոփոխվող պահանջները և ուսանողների կարիքները:

Ելնելով վերոգրյալ փոփոխությունների արդյունքների վերլուծությունից` առաջիկայում նախատեսվում է բակալավրի ԿԾ-ի յուրաքանչյուր կրթամասում ունենալ առնվազն մեկ կամրնտրական բաղադրիչ, իսկ մասնագիտական կրթամասում` առնվազն երկու:

### Ուսանողների գնահատման լավարկված մեթոդաբանություն և գործող նոր կարգ

### Անանուն գնահատման համակարգի գործարկում

Ուսումնառության ընթացքում ուսանողների գիտելիքները, կարողությունները և հմտությունները գնահատելու համար



2013թ.-ից ՄՈՒՀ-ում գործել է ԳՊՄԻ-ի բակալավրիատի առկա/հեռակա և մագիստրատուրայի կրեդիտային կրթական ծրագրերով ուսումնառության արդյունքների գնահատման և բողոքարկման ընթացակարգը: Ընթացակարգը երկու անգամ ենթարկվել է բարելավման և կրկին լավարկվել է 2024թ.-ին՝ նպատակ հետապնդելով ապահովելու գնահատման արժանահավատության, հավաստիության, օբյեկտիվության, անաչառության և թափանցիկության գործուն և ճկուն մեխանիզմներ:

Գնահատման գործընթացի լավարկման փիլիսոփայությունը կատարվել է երեք հիմնական ուղղություններով՝ ապահովելով գնահատման՝

- արժանահավատությունը,
- օբյեկտիվությունը, անաչառությունը,
- թափանցիկությունը:

Գնահատման արժանահավատությունն ապահովվում է ՄԿԾ-ների դասընթացների վերջնարդյունքների ↔ դասավանդման և ուսումնառության մեթոդների ↔ գնահատման մեթոդների /հանձնարարականների համահնչեցմամբ, որը ներկայացված է [ՇՊՀ-ում ՄԿԾ-ների կառավարման հայեցակարգում](#):

Գնահատման համակարգի օբյեկտիվությունը և անաչառությունն ապահովվում են մի շարք գործիքներով, որոնք ներդրվել են 2024թ.-ին լավարկված [ՇՊՀ-ում բակալավրի առկա/հեռակա և մագիստրատուրայի առկա կրեդիտային կրթական ծրագրերով ուսումնառության արդյունքների գնահատման և բողոքարկման ընթացակարգում](#), [ուսանողների մնացորդային գիտելիքների ստուգման ընթացակարգում](#): Այսպես. անանուն ստուգումները, մնացորդային գիտելիքի ստուգումները, կրկնակի ստուգումները:

Գնահատման թափանցիկությունն ապահովվում է բողոքարկման լավարկված գործընթացի միջոցով. այսուհետ բողոքարկման ենթակա են բազմագործոնային գնահատման բոլոր բաղադրիչները՝ ակտիվությունը, անհատական աշխատանքի ստուգումը, ստուգում 1-ը, ստուգում 2-ը, ամփոփիչ ստուգումը՝ հնարավորություն ընձեռելով այդ գործընթացն իրականացնելու առավել արդյունավետ, թափանցիկ:

[ՇՊՀ-ի մագիստրատուրայի և բակալավրի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման ընթացակարգով](#)՝ 2024 թ.-ին լավարկված: Ընթացակարգում մասնավորապես փոփոխվել է ՄԹ-ի գնահատման ռուբրիկը՝ հավելելով այն հետևյալ բաղադրիչով. ուսանողի կողմից տպագրված/տպագրության փուլում գտնվող հոդվածի առկայություն

(համահեղինակությամբ կամ առանց համահեղինակության)՝ 5 միավոր, և պարտադիր նշումով, որ հետազոտությունը կատարված է ՄԹ-ի շրջանակում: Նման մեխանիզմի կիրառումը կարևոր է համարվում նաև հետազոտության և ուսումնառության կապի ամրապնդման տեսանկյունից:

Նշենք նաև, որ ՇՊՀ-ն առաջիկայում, նպատակ ունենալով ապահովելու ՄԿԾ-ների վերջնարդյունքների ձեռքբերման արժանահավատությունը և բարձրացնելու գնահատման գործընթացի արդյունավետությունը, նախատեսում է գնահատման համակարգում կատարել ևս մեկ լավարկում: Գնահատման համակարգի լավարկումը վերաբերելու է ուսումնական կիսամյակում շաբաթական լսարանային 4 և ավելի ժամ ծանրաբեռնվածություն ունեցող մասնագիտական դասընթացների բազմագործոնային վերջնական գնահատականի ձևավորմանը: Նախատեսվում է, որ այդ ստուգումներից յուրաքանչյուրը՝ միջանկյալ ստուգում 1-ը, միջանկյալ ստուգում 2-ը, ոչ թե առանձին գործոն է լինելու բազմագործոնային վերջնական գնահատականի ձևավորման համար, այլ ստուգումներից յուրաքանչյուրն է գնահատվելու բազմագործոնային սկզբունքով: Այսպես՝ միջանկյալ ստուգումներից յուրաքանչյուրի միավորը ձևավորվելու է համապատասխան կշիռներով երեք գործոնների՝ հաճախումների (10), ընթացիկ ակտիվության (30) և ստուգում 1-ի/ ստուգում 2-ի (60) հիման վրա: Հաճախումները և ընթացիկ ակտիվությունը՝ որպես գործոններ, գնահատվելու են ուսումնական կիսամյակի այդ ժամանակահատվածի համար: Ընթացիկ ակտիվությունը գնահատվելու է սեմինար, գործնական, լաբորատոր պարապմունքների, ինչպես նաև դասընթացի վերջնարդյունքների գնահատականների միջին թվաբանականով:

Դասընթացի բազմագործոնային վերջնական գնահատականը ձևավորվում է միջանկյալ ստուգում 1-ի և միջանկյալ ստուգում 2-ի միջին թվաբանականով, եթե դրանցից երկուսն էլ դրական միավորներ են:

Եթե ուսանողը միջանկյալ ստուգում 1-ից/ ստուգում 2-ից ցուցաբերում է անբավարար առաջադիմություն կամ չի ներկայանում քննությանը, ապա միջանկյալ ստուգում 1-ի դեպքում՝ մինչև երկրորդ միջանկյալ ստուգման համար սահմանված ժամկետում, իսկ միջանկյալ ստուգում 2-ի դեպքում՝ հիմնական քննաշրջանում, ակադեմիական պարտքը անվճար, ապա նաև վճարովի հիմունքներով ևս երկուական անգամ մարելու հնարավորություն է ունենում: Միջանկյալ ստուգում 1-ից վերահանձման ընձեռնված հնարավորությունները չիրացնելու դեպքում ուսանողը իրավունք չի ունենում հանձնելու միջանկյալ ստուգում 2-ը:

Այսինքն՝ միջանկյալ ստուգումն ստուգման առանձին գործոնից վերածվում է բազմագործոնային գնահատականի:

**Գրագողության դեմ պայքարի բազմազանեցված և հստակեցված մեխանիզմներ**

ՇՊՀ-ի համար ռազմավարական առաջնահերթություն է ուսումնական գործընթացում ապահովել ակադեմիական ազնվությունը: 2015 թ.-ից ՇՊՀ-ում ներդրվել է ԳՊՄԻ-ի ակադեմիական ազնվության հայեցակարգը, իսկ 2019թ.-ից՝ գրագողության դեմ պայքարի քաղաքականությունը: Այս փուլում ՇՊՀ-ն որդեգրել է իր շահառուների իրազեկվածության աստիճանի բարձրացման քաղաքականություն: Այսպես՝ ՈՒԳԿԿ-ն և ԳՔՆԿ-ն համատեղ ջանքերով ուսանողների և ՊԴ կազմի համար համապատասխան մասնագետների ներգրավմամբ կազմակերպել են տեղեկատվական սեմինարներ: Այդ միջոցառումները ներառված են կենտրոնների և ամբիոնների ամենամյա աշխատանքային պլաններում և, համաձայն [Ուսումնական խորհրդատուների գործունեության կարգի](#), մտնում են վերջիններիս ամրագրված պարտականությունների մեջ: Այս հարցը մանրամասնորեն ներկայացված է սույն հաշվետվության **Լավարկված իրավական փաստաթղթեր** բաժնում:

**Աղյուսակ 1.1.2.**

**ԹՎԳԾ-ի կատարողական**

N	Ակնկալվող արդյունքը՝ ըստ ԹՎԳԾ-ի		Նախատեսվող միջանկյալ արդյունքները՝ ըստ ԹՎԳԾ-ի	Լուծման/ գործողության իրականացման ժամանակահատվածը	Գնահատման հաշվետվության ձևը
1 (1.1)	3.1 Բարելավված և կիրարկված ՄԿԾ-ներ և վերջիններիս արդյունավետ	1.1. 1	3.1.1. Ներքին և արտաքին շահակիցների ներգրավմամբ, աշխատաշուկայի պահանջների	I փուլ I եռամսյակ 2023 –	3.1.1. Բենչմարքինգ և/կամ որակական և քանակական վերլուծություններ 3.1.3. Բենչմարքինգ և/կամ աուդիտ և/կամ ինքնավերլուծություն և/կամ հաշվետվություն /ներ/

<p><i>կառավարման համակարգ</i></p> <p><i>3.3. Հավարկված և կիրարկված գնահատման համակարգ</i></p>	<p><i>համահունչ վեր հանված և վերլուծված կարիքներ</i></p> <p><i>3.1.3. ՄԿԾ-ների լավարկման մշակված և ներդրված մեխանիզմներ և ընթացակարգեր, մասնավորապես.</i></p> <ul style="list-style-type: none"> <li><i>➤ բարձրացնել ՄԿԾ-ների կառավարման արդյունավետությունը՝ հստակեցնելով և իրագործելի դարձնելով ՄԿԾ-ների պատասխանատուների գործառույթները,</i></li> <li><i>➤ ՄԿԾ-ների վերամշակմանը, մշակմանը ներգրավել արտաքին և ներքին</i></li> </ul>	<p><i>IV եռամսյակ 2024</i></p> <p><i>Շարունակական՝ ըստ կարիքի</i></p>	
---	---	---	--

			<p><i>շահակիցներին,          &gt; հաջողված          գործատուների          ներգրավում          ուսումնական          գործընթացում,          &gt; ձևավորել և          բազմազանեցնել          ՄԿԾ-ներում          կամրնտրական          բաղադրիչը,          &gt; ՊԴ և վարչական          աշխատակազմեր          ի          վերապատրաստո         ւմներ՝ միտված          ՄԿԾ-ների          բարելավմանը,          &gt; համահունչ          դարձնել ԹՕՊ-          րում ներառված          դասավանդման          մեթոդ-          հանձնարարակա          ներ-ռեսուրսներ          բաղադրիչները,</i></p>		
--	--	--	---	--	--

			և այլն		
--	--	--	--------	--	--

3.1.1. Ներքին և արտաքին շահակիցների ներգրավմամբ, աշխատաշուկայի պահանջներին համահունչ վեր հանված և վերլուծված կարիքներ

Վերոնշյալ նախատեսվող միջանկյալ արդյունքի ձեռքբերման մասին մանրամասն ներկայացված է սույն հաշվետվության [Լավարկված ԿԾ-ներ](#) բաժնում:

3.1.3. ՄԿԾ-ների լավարկման մշակված և ներդրված մեխանիզմներ և ընթացակարգեր, մասնավորապես.

- բարձրացնել ՄԿԾ-ների կառավարման արդյունավետությունը՝ հստակեցնելով և իրագործելի դարձնելով ՄԿԾ-ների պատասխանատուների գործառույթները,
- ՄԿԾ-ների վերամշակմանը, մշակմանը ներգրավել արտաքին և ներքին շահակիցներին,
- հաջողված գործատուների ներգրավում ուսումնական գործընթացում,
- ձևավորել և բազմազանեցնել ՄԿԾ-ներում կամընտրական բաղադրիչը,
- ՊԴ և վարչական աշխատակազմերի վերապատրաստումներ՝ միտված ՄԿԾ-ների բարելավմանը,
- համահունչ դարձնել ԹՕՊ-երում ներառված դասավանդման մեթոդ-հանձնարարականեր-ռեսուրսներ բաղադրիչները,

Վերոնշյալ նախատեսվող միջանկյալ արդյունքների մասին առավել մանրամասն տեղեկատվություն ներկայացված է սույն հաշվետվության [Աղյուսակ 1.1 ՇՊՀ-ի՝ 2023-2027թթ. Զարգացման ռազմավարական ծրագրի կատարողական](#) բաժնում՝ ևս մեկ անգամ փաստելով ԶՌԾ-ի և ԹՎԳԾ-ի համահնչեցման մասին: Իսկ ինչ վերաբերում է [Հաջողված գործատուների ներգրավում ուսումնական գործընթացում](#) արդյունքին, ապա նշենք, որ հաշվետու տարում այդ խնդիրը պահվել է ուշադրության կենտրոնում՝ ձեռնարկելով մի շարք գործուն քայլեր. մասնավորապես ինստիտուցիոնալ առումով մագիստրոսական թեզերի համադրվելու ինստիտուտի ներդրումով, ինչպես նաև առանձին մասնագիտությունների գծով հաջողված գործատուներին դասավանդման գործընթացում ներգրավելու առումով: Հաշվետու տարում Սպորտի և արվեստի, Հոգեբանության և սոցիոլոգիայի, Աշխարհագրության և սերվիսի, Կենսաբանության և քիմիայի, Մանկավարժության ամբիոններում թվով յոթ

գործատուներ իրենց գործունեությունն են ծավալել: Ավելին, նախատեսվում է հաջորդ ուսումնական տարիներին ամբիոններում գործատուների ներգրավվածությունը հասցնել 10%-ի:

**Աղյուսակ 1.1. 3.**

**ՇՈՂ-ի՝ 2023-2027թթ. Զարգացման ռազմավարական ծրագրի կատարողական**

N	Խնդիրներ		Լուծումներ/գործողություններ	Լուծման/ գործողության իրականացման ժամանակա- հատվածը	Կատարողականի ցուցիչ
			Աշխատաշուկայի և որակավորումների ազգային ու ոլորտային շրջանակների պահանջներին համահունչ նոր, պահանջարկ ունեցող մասնագիտությունների ներդրում և պահանջարկ չունեցող մասնագիտությունների	Ամենամյա  I-III եռամսյակ	

			օպտիմալացում:		
--	--	--	---------------	--	--

Ելնելով պայմանական հավատարմագրված կարգավիճակից՝ ՇՊՀ-ն առայժմ չի կարող լիցենզավորման ներկայացնել նոր կրթական ծրագիր: Չնայած այս կարգավիճակին՝ հաշվետու տարում ՈՒԳԿԿ-ն Կենսաբանության և քիմիայի ամբիոնի հետ համատեղ ակտիվ աշխատանքներ է ծավալել 084101.00.6 «Անասնաբուժություն» ՄԿԾ-ի մասնագիտական փաթեթի պատրաստման և լիցենզավորման ներկայացնելու ուղղությամբ: Ավելին, իրականացվել են ակտիվ բանակցություններ «Ստանդարտ դիպլոմ» ՍՊԸ-ի Շիրակի մարզային կենտրոն փորձարկման լաբորատորիայի ղեկավարության հետ՝ ուսումնական բազայի ապահովման նպատակով: Իսկ ինչ վերաբերում է պահանջարկ չունեցող մասնագիտությունների օպտիմալացմանը, ապա նշենք, որ հաշվետու տարում ամբիոնների հետ քննարկվել են օպտիմալացման տարբերակները՝ թերբեռնված մասնագիտություններից մի մասի թաղարկումը սահմանափակվել է միայն հեռակա ուսուցմամբ, իսկ որոշ մասնագիտությունների հայտագրումից հրաժարվել ենք: Այդ մասին առավել մանրամասն ներկայացված է սույն հաշվետվության «Խիստ թերբեռնված կուրսերի քանակի կրճատում» բաժնում:

**Աղյուսակ 1.1.4.**

**ԹՎԳԾ-ի կատարողական**

N	<i>Ակնկալվող արդյունքը՝ ըստ ԹՎԳԾ-ի</i>		<i>Նախատեսվող միջանկյալ արդյունքները՝ ըստ ԹՎԳԾ-ի</i>	<i>Լուծման/ գործողության իրականացման ժամանակահատվածը</i>	<i>Գնահատման հաշվետվության ձևը</i>
			<i>3.1.2. Աշխատաշուկայի և որակավորումների ազգային ու ոլորտային շրջանակների պահանջներին համահունչ</i>	<i>Ամենամյա I-III եռամսյակ</i>	<i>Որակական և քանակական վերլուծություններ</i>



			<i>նոր, պահանջարկ ունեցող ՄԿԾ-ների ներդրում և պահանջարկ չունեցող ՄԿԾ-ների օպտիմալացում:</i>		
--	--	--	---	--	--

Տե՛ս Աղյուսակ 1.1.3.-ի վերաբերյալ ներկայացված հատվածը:

Աղյուսակ 1.1.5.

**ՇՊՀ-ի՝ 2023-2027թթ. Զարգացման ռազմավարական ծրագրի կատարողական**

N	Խնդիրներ		Լուծումներ/գործողություններ	Լուծման/ գործողության իրականացման ժամանակա- հատվածը	Կատարողականի ցուցիչ
		1.1. 3	ՄԿԾ-ների լավարկմանը միտված մեխանիզմների և ընթացակարգերի մշակում և ներդրում:	I փուլ I եռամսյակ 2023- III եռամսյակ 2023 Շարունակական՝ ըստ կարիքի	

Տե՛ս սույն հաշվետվության «Կրթական ծրագրերի (ԿԾ-ների) բարեփոխմանը միտված ներդրված և գործող մեխանիզմներ ու քննադատարկարկեր» բաժինը:

**Աղյուսակ 1.1.6.**

**ՇՊՀ-ի՝ 2023-2027թթ. Զարգացման ռազմավարական ծրագրի կատարողական**

N	Խնդիրներ		Լուծումներ/գործողություններ	Լուծման/գործողության իրականացման ժամանակահատվածը	Կատարողականի ցուցիչ
		1.1.4	Գնահատման համակարգի վերանայում և բարելավում՝ ընդլայնելով ակադեմիական ազնվության և բարեվարքության միջոցառումները:	I փուլ I եռամսյակ 2023 - III եռամսյակ 2023 Շարունակական՝ ըստ կարիքի	<ul style="list-style-type: none"> <li>➤ Ուսանողների գնահատման լավարկված մեթոդաբանություն և գործող նոր կարգ</li> <li>➤ Անանուն գնահատման համակարգի գործարկում</li> </ul>

Տե՛ս սույն հաշվետվության «Ուսանողների գնահատման լավարկված մեթոդաբանություն և գործող նոր կարգ» և «Անանուն գնահատման համակարգի գործարկում» բաժինները:

**Աղյուսակ 1.1.7.**

**ԹՎԳԾ-ի կատարողական**

N	Ակնկալվող արդյունքը՝ ըստ ԹՎԳԾ-ի		Նախատեսվող միջանկյալ արդյունքները՝ ըստ ԹՎԳԾ-ի	Լուծման/ գործողության իրականացման ժամանակահատվածը	Գնահատման հաշվետվության ձևը
		1.1.4	3.3.1 Վերհանված և վերլուծված կարիքներ 3.3.2 Գնահատման համակարգի բարելավման մշակված և ներդրված մեխանիզմներ և ընթացակարգեր՝ ընդլայնելով ակադեմիական	I փուլ I եռամսյակ 2023 - III եռամսյակ 2023 Շարունակական՝ ըստ կարիքի	Ինքնավերլուծություն և/կամ հաշվետվություն

			<i>ազնվության և բարեվարքության միջոցառումները</i>		
--	--	--	---	--	--

Գնահատման համակարգի լավարկման նպատակով [վերհանված և վերլուծված կարիքներ](#) մասով հարկ ենք համարում ներկայացնելու այն փաստը, որ 2023թ. փետրվար-մարտ ամիսներին բակալավրի (առկա/հեռակա) և մագիստրատուրայի ուսսանողական համակազմի շրջանում, իսկ մարտ-ապրիլ ամիսներին՝ ՊԴ կազմի շրջանում անցկացվել են հարցումներ ՇՊՀ-ում գործող գնահատման համակարգի, մեխանիզմների գնահատման և մշտադիտարկման նպատակով: Հարցումներին մասնակցել են 272 ուսանող (տե՛ս **Հավելված 5.1**) և 57 դասախոս (տե՛ս **Հավելված 5.2**): Հարցումների արդյունքները հիմք են հանդիսացել գնահատման համակարգի վերանայման և բարելավման համար: Գնահատման համակարգի բարելավման համատեքստում ընդլայնվել է ակադեմիական ազնվության և բարեվարքության սկզբունքների իրազեկման, մասսայականացման, տարածման միջոցառումները: Արդեն 2023 թ.-ի դեկտեմբերի 8-ին ՈՒԳԿԿ-ն և ԳՔՆԿ-ն համատեղ ջանքերով ուսանողների և ՊԴ կազմի համար համապատասխան մասնագետների ներգրավմամբ կազմակերպվել են տեղեկատվական սեմինարներ: Այս մասին առավել մանրամասն նշված է սույն հաշվետվության **«Գրագրողության դեմ պայքարի քազմազանեցված և հստակեցված մեխանիզմներ»** բաժնում:

**Աղյուսակ 1.1 .8.**

**ՇՊՀ-ի՝ 2023-2027թթ. Զարգացման ռազմավարական ծրագրի կատարողական**

N	Խնդիրներ		Լուծումներ/գործողություններ	Լուծման/ գործողության իրականացման ժամանակա-	Կատարողականի ցուցիչ

				<b>հատվածը</b>	
		1.1. 5	ՇՂՀ-ում գրագողության դեմ պայքարի քաղաքականության կատարելագործում	I փուլ I եռամսյակ 2023- III եռամսյակ 2023 Շարունակական ըստ կարիքի	

Այս հարցը մանրամասնորեն ներկայացված է սույն հաշվետվության «Գրագողության դեմ պայքարի բազմազանեցված և հստակեցված մեխանիզմներ» բաժնում:

## 1.2. ԲԱՐԵԼԱՎՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Աղյուսակ 1.2.1.

**ՇՂՀ-ի՝ 2023-2027թթ. Զարգացման ռազմավարական ծրագրի կատարողական**

N	Խնդիրներ		Լուծումներ/գործողություններ	Լուծման/ գործողության իրականացման Ժամանակա- հատվածը	Կատարողականի ցուցիչ
2 (1.2)	Բարելավված կրթական միջավայր	1.2. 1	Ուսումնական մասնաշենքերի, լսարանային ֆոնդի, լաբորատորիաների վերանորոգում,	II եռամսյակ 2023 - III եռամսյակ 2027	<ul style="list-style-type: none"> <li>➤ Վերանորոգված ուսումնական մասնաշենքեր (հաշվի առնելով ներառականության և աղետների ռիսկերի կառավարման պահանջները):</li> <li>➤ Ժամանակակից համակարգչային</li> </ul>

			վերակահավորում:		տեխնիկայով համալրված 2 նոր կաբինետ-լսարան: ➤ Տեխնիկապես կահավորված առնվազն 3 նոր լսարան և ընթերցասրահ: ➤ Կրթական ծրագրերի պահանջներին համապատասխան վերազինված լինգաֆոնային լսարան: ➤ Ըստ կրթական ծրագրերի՝ ուսումնական նյութ հանդիսացող հիմնական գրականության թվայնացված և շահառուներին ու շահակիցներին հասանելի էլեկտրոնային բազա: ➤ Ուսանողներին մատուցվող ծառայությունների լավարկված և ներդրված մեխանիզմներ ու ընթացակարգեր (մասնավորապես, թարմացված տվյալների բազա շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ, անվճար խորհրդատվություններ, ուսանողական կառույցների արդյունքահեն ֆինանսավորում): ➤ Լավարկված և գործող ներքին իրավական ակտեր՝ «ՇՊՀ ներքին կարգապահական կանոնները.
		1.2. 2	Ժամանակակից տեխնիկական միջոցների ձեռքբերում և գրադարանային ֆոնդի աստիճանական թվայնացում:		
		1.2. 3	Կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով ուսանողներին մատուցվող ծառայությունների (գործիքակազմի) բարելավում:	I փուլ  I եռամսյակ 2023 - III եռամսյակ 2023  Շարունակական ըստ կարիքի	
		1.2. 4	Բարեվարքության սկզբունքների և վարքականոնների կատարելագործում:	II եռամսյակ 2023 - III եռամսյակ	

				2023	կանոնակարգ», «ՇՊՀ էթիկայի սկզբունքներ»: ➤ Ներքին շահառուների համար իրականացված մարզամշակութային միջոցառումների թվի աճ:
		1.2. 5	ՇՊՀ-ի սովորողների և աշխատակիցների հանգստի և ժամանցի կազմակերպման ձևերի բազմազանեցում:	II եռամսյակ 2023 - III եռամսյակ 2027	

- Վերանորոգված ուսումնական մասնաշենքեր (հաշվի առնելով ներառականության և աղետների ռիսկերի կառավարման պահանջները):
- Ժամանակակից համակարգչային տեխնիկայով համայրված 2 նոր կաբինետ-լսարան:
- Տեխնիկապես կահավորված առնվազն 3 նոր լսարան և ընթերցասրահ:
- Կրթական ծրագրերի պահանջներին համապատասխան վերազինված լինգվաֆոնային լսարան:
- Ըստ կրթական ծրագրերի՝ ուսումնական նյութ հանդիսացող հիմնական գրականության թվայնացված և շահառուներին ու շահակիցներին հասանելի էլեկտրոնային բազա:
- Ուսանողներին մատուցվող ծառայությունների լավարկված և ներդրված մեխանիզմներ ու ընթացակարգեր (մասնավորապես, թարմացված տվյալների բազա շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ, անվճար խորհրդատվություններ, ուսանողական կառույցների արդյունքահեն ֆինանսավորում):
- Լավարկված և գործող ներքին իրավական ակտեր՝ «ՇՊՀ ներքին կարգապահական կանոնները, կանոնակարգ», «ՇՊՀ էթիկայի սկզբունքներ»:
- Ներքին շահառուների համար իրականացված մարզամշակութային միջոցառումների թվի աճ:  
Իսկ ինչ վերաբերում է «Բարելավված կրթական միջավայր» ռազմավարական խնդրին, ապա հաշվետու 2022-2023 ուստարում պլանավորվել և մեծամասամբ կատարվել են վերոնշյալ հանձնառությունները, մասնավորապես՝
  - ✓ Պարույր Սևակի 4 հասցեի ուսումնական մասնաշենքի մասնակի վերանորոգում, այդ թվում՝ Իրավագիտության մասնագիտացված կաբինետի ստեղծում,
  - ✓ համակարգչային մեկ լսարանի ձևավորում,

- ✓ տեխնիկապես կահավորված երկու նոր լսարանի ձևավորում,
- ✓ կրթական ծրագրերի պահանջներին համապատասխան վերազինված լինգվաֆոնային լսարանի ձևավորում:

Ռազմավարական հանձնառության կատարումը ներառականության և աղետների ռիսկերի կառավարման պահանջներին համապատասխան ուսումնական մասնաշենքի վերանորոգումը նախատեսվում է առաջիկայում, ինչպես և ընթերցասրահի տեխնիկապես վերազինումը:

Հաշվետու տարում ՇՊՀ-ի գրքային ֆոնդը կազմել է շուրջ 66.000 միավոր գրականություն: Գրադարանային պաշարները զգալիորեն համալրվել են մասնագիտական գրքերով՝ 61.019-ից հասնելով 61.154-ի: Առավելապես աճել են էլեկտրոնային գրքերի պաշարները՝ հասնելով մոտ 690-ի: Գրադարանային ֆոնդի համալրումը մասնագիտական նոր գրականությամբ մշտապես կատարվում է ըստ ՄԿԾ-ների՝ ՈՒԳԿԿ-ի կողմից համապատասխան հանձնարարականներով վերհանված կարիքների: Հաշվետու տարում, ըստ 24.08.2023թ.-ի հանձնարարականի, ամբիոններից ստացվել են թվայնացման կարիք ունեցող գրականության ցանկերը: Ուսումնական կարիքներից ելնելով՝ գրականության թվայնացման առաջին փուլի ընթացքում յուրաքանչյուր ՄԿԾ-ի ուղղությամբ թվայնացվել է առնվազն 5 անուն գրականություն: Գործընթացը շարունակական է և միտված է ուսումնական ռեսուրսների անընդհատ համալրմանը:

➤ Ուսանողներին մատուցվող ծառայությունների լավարկված և ներդրված մեխանիզմներ ու ընթացակարգեր (մասնավորապես, թարմացված տվյալների բազա շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ, անվճար խորհրդատվություններ, ուսանողական կառույցների արդյունքահեն ֆինանսավորում):

Այս առումով նշենք, որ «թարմացված տվյալների բազա շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ» հանձնառության ուղղությամբ ՇՊՀ-ն, ունենալով Ուսանողների աջակցության, բուհ-գործատու համագործակցության բաժին, նախ, իր համար կարևոր խնդիր է համարել շրջանավարտների համար կազմակերպվող վերապատրաստումները, պլանավորված, բաժնի աշխատանքային ամենամյա պլանում ամրագրված և մշտապես կատարվող սեմինար-վերապատրաստումները՝ միտված որակավորմամբ պայմանավորված պաշտոնների տեղակալման մրցույթներին պատրաստ լինելու կարողությունների ձեռքբերմանը, աշխատաշուկայի պահանջների փոփոխություններով պայմանավորված՝ նոր հմտությունների ձեռքբերմանը: Ինչ վերաբերում է ուսանողների անվճար խորհրդատվություններին, ապա արդյունավետ ուսումնառության ապահովման նպատակով ՇՊՀ-ն, համաձայն ուսանողների կարիքների բացահայտման և օժանդակման կարգի, ուսանողների համար



կարող է կազմակերպել լրացուցիչ պարապմունքներ և խորհրդատվություններ, լրացական և ոչ ֆորմալ դասընթացներ: Սա կարևոր մեխանիզմներից մեկն է:

Հաջորդն այն է, որ [ուսումնական խորհրդատուների գործունեության կարգի](#) համաձայն (տե՛ս «[Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան](#)» [հիմնադրամի ուսումնական խորհրդատուների գործունեության կարգ](#), 3.2. կետը իր ենթակետերով)՝ ուսումնական խորհրդատուն ամսական առնվազն մեկ անգամ՝ **դասացուցակով ամրագրված օրերին**, հանդիպում է համապատասխան կուրսի հետ և ապահովում հետադարձ կապ՝ ուսանողներին տրամադրելով տեղեկատվություն, խորհրդատվություն ուսումնական գործընթացի վերաբերյալ, հիմնական քննաշրջանի ավարտից հետո, ինչպես նաև լուծարային շրջանների միջև ընկած ժամանակահատվածում չառաջադիմող (փորձաշրջանի կարգավիճակ ունեցող) ուսանողների համար կազմակերպելով խորհրդատվական լրացուցիչ պարապմունքներ:

Կիրառության մեջ դրված հաջորդ մեխանիզմն ամրագրված է ՇՊՀ-ի [ակադեմիական խորհրդատվությունների կառավարման աշխատակարգում](#) (2024թ. ԳԽ-ի կողմից հաստատված), որտեղ հստակեցված են ակադեմիական խորհրդատվությունների ձևերը (որոնք հաշվի են առնում բուհական միջավայրում, ինչպես նաև աշխատաշուկայում պահանջված գիտելիքներն ու կարողությունները), պլանավորման և իրականացման մոտեցումները: Ըստ բովանդակային ուղղվածության՝ առաջարկվում են ակադեմիական խորհրդատվության հետևյալ ձևերը՝ գիտահետազոտական գրագիտության խորհրդատվություններ, համակարգային կոմպետենցիաների վրա հիմնված խորհրդատվություններ, ԿԾ-ների մասնագիտական կրթաբլոկի առարկաների առանձին թեմաների ծրագրային և արտածրագրային խորհրդատվություններ, հետազոտական խորհրդատվություններ և այլն:

Ինչ վերաբերում է [ուսանողական կառույցների արդյունքահեն ֆինանսավորմանը](#), ապա նշենք, որ ծրագրային բյուջետավորման շրջանակում նախահաշիվը կազմելու համար, համաձայն [ՇՊՀ-ի եկամուտների և ծախսերի նախահաշվի կազմման, հաստատման և փաստացի տվյալների \(կատարողականի\) վերլուծության ընթացակարգի](#), պլանավորվող տարվան վերաբերող ծախսային պահանջների (պահանջմունքների) վերաբերյալ տվյալները հավաքագրվում են ինչպես բուհի կառուցվածքային բոլոր ստորաբաժանումներից, այնպես էլ ՈԻԽ-ից և ՈԻԳԸ-ից: Այդ տվյալները ներկայացվում են ՖՈԿՀ բաժին՝ համապատասխան ձևաչափերով:

➤ [Լավարկված և գործող ներքին իրավական ակտեր՝ «ՇՊՀ ներքին կարգապահական կանոնները, կանոնակարգ», «ՇՊՀ էթիկայի սկզբունքներ»:](#)

Նշված երկու՝ **«ՇՊՀ ներքին կարգապահական կանոնները. կանոնակարգ», «ՇՊՀ էթիկայի սկզբունքներ»** փաստաթղթերը դեռևս չեն լրամշակվել: Նշենք, որ այս առումով աշխատանքային կարևոր քննարկումներ են տեղի ունեցել, և առաջիկայում այդ քննարկումները կստանան պատշաճ փաստաթղթավորում:

➤ **Ներքին շահատուների համար իրականացված մարզամշակութային միջոցառումների թվի աճ:**

Նշված հանձնառության մասին նշենք, որ ՈՒԳԿԿ-ի՝ 2023 թ. օգոստոսի 28-ի շրջաբերականով մասնագիտական ամբիոններին տրվել է 2023-2024 ուստարվա տարեկան օրինակելի աշխատանքային պլան, որով հանձնարարվել է առանձին հավելվածով ներկայացնել գիտակրթական և մարզամշակութային միջոցառումների տարեկան պլանը: Հետայսու ամբիոնների աշխատանքային պլաններում այդ հավելվածը մշտապես առկա կլինի, և 2023-2024 ուստարվա հաշվետվություններում դրանց կատարումը ներկայացվելու է առանձին բաժնով: Նման մեխանիզմի կիրառումը առավելապես կնպաստի այդ միջոցառումների թվի աճին:

**Աղյուսակ 1.2. 2.**

**ԹՎԳԾ-ի կատարողական**

N	Ակնկալվող արդյունքը՝ ըստ ԹՎԳԾ-ի		Նախատեսվող միջանկյալ արդյունքները՝ ըստ ԹՎԳԾ-ի	Լուծման/ գործողության իրականացման ժամանակահատվածը	Գնահատման հաշվետվության ձևը
2 (1.2)	4.1. Կրթական միջավայրի արդյունավետություն և ապահովելու նպատակով ուսանողներին	1.2. 1	4.1.1. Կարիքների վերհանում և վերլուծություն  7.1.1. Կարիքների վերհանում և վերլուծություն  7.1.2 Բարելավված	II եռամսյակ 2023 -  III եռամսյակ 2027	

	<p><i>մատուցվող ծառայությունների բարելավված գործիքակազմ</i></p> <p><i>7.1 Ռազմավարական առաջնահերթություններից բխող բարեփոխված գիտակրթական միջավայր.</i></p>	<p><i>ուսումնական ռեսուրսներ, մասնավորապես`</i></p> <ul style="list-style-type: none"> <li><i>➤ վերազինված լինգաֆոնային կաբինետ,</i></li> <li><i>➤ արդիականացված և տեխնիկապես հազեցած լսարաններ, կաբինետներ, ընթերցասրահ,</i></li> <li><i>➤ համալրված և ըստ ուսումնական կարիքների թվայնացված գրադարանային ֆոնդ,</i></li> <li><i>➤ ներառականությունն ապահովող անհրաժեշտ բարելավված միջավայր ուսումնառության արդյունավետ կազմակերպման համար:</i></li> </ul>		<p><i>Որակական և քանակական վերլուծություններ և/կամ հաշվետվություն /ներ/</i></p>
--	---	---	--	---

		<p>7.1.3 Գործընթացների էլեկտրոնային կառավարման ներդրված համակարգ</p> <p>7.1.4 Ռեսուրսների (ֆինանսական և այլն) արդյունավետ կառավարումն ապահովող մշակված և ներդրված մեխանիզմներ և ներքին իրավական ակտեր</p>		
		<p>4.1.2. Ուսանողներին մատուցվող ծառայությունների լավարկված և ներդրված մեխանիզմներ և ընթացակարգեր, մասնավորապես՝</p> <ul style="list-style-type: none"> <li>➤ ապահովել պարբերաբար և շարունակական տրամադրվող անվճար խորհրդատվություններ,</li> <li>➤ աջակցել շրջանավարտների հետագա կարիերիային՝</li> </ul>	<p>I փուլ</p> <p>I եռամսյակ 2023</p> <p>-</p> <p>III եռամսյակ 2023</p> <p>Շարունակական ըստ կարիքի</p>	<p>Հաշվետվություն/ներ/</p>

			<p>պարբարաբար թարմացնելով նրանց տվյալների բազան, ➤ ընդլայնել ուսանողների հետազոտական աշխատանքներում ներգրավվածությունը, ➤ ուսանողական կառույցների արդյունքահեն ֆինանսավորում, ➤ լավագույնների խրախուսման լավարկված մեխանիզմներ (ներառելով նաև կամավորությունը), հանգստի և ժամանցի բազմազանեցված ձևեր: ➤ այլ</p>		
--	--	--	---	--	--

4.1.1./7.1.1. Կարիքների վերհանում և վերլուծություն

7.1.2 Բարելավված ուսումնական ռեսուրսներ,  
մասնավորապես՝

- վերազինված լինգաֆոնային կաբինետ,

- արդիականացված և տեխնիկապես հագեցած լսարաններ, կաբինետներ, ընթերցասրահ,
- համալրված և ըստ ուսումնական կարիքների թվայնացված գրադարանային ֆոնդ,
- ներառականությունն ապահովող անհրաժեշտ բարելավված միջավայր ուսումնառության արդյունավետ կազմակերպման համար:

7.1.3 Գործընթացների էլեկտրոնային կառավարման ներդրված համակարգ

7.1.4 Ռեսուրսների (ֆինանսական և այլն) արդյունավետ կառավարումն ապահովող մշակված և ներդրված մեխանիզմներ և ներքին իրավական ակտեր

4.1.2. Ուսանողներին մատուցվող ծառայությունների լավարկված և ներդրված մեխանիզմներ և ընթացակարգեր, մասնավորապես՝

- ապահովել պարբերաբար և շարունակական տրամադրվող անվճար խորհրդատվություններ,
- աջակցել շրջանավարտների հետագա կարիերիային՝ պարբերաբար թարմացնելով նրանց տվյալների բազան,
- ընդլայնել ուսանողների՝ հետազոտական աշխատանքներում ներգրավվածությունը,
- ուսանողական կառույցների արդյունքահեն ֆինանսավորում,
- լավագույնների խրախուսման լավարկված մեխանիզմներ (ներառելով նաև կամավորությունը), հանգստի և ժամանցի բազմազանեցված ձևեր:

➤ այլ:

*Կարիքների վերհանում և վերլուծություն:* Այս մասին նախ նշենք, թե ինչպես են վերհանվել կարիքները. մասնագիտական ամբիոններին հաշվետու տարում տրվել են հանձնարարականներ՝ թողարկվող ՄԿԾ-ների իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսների (Ռեկտորի հանձնարարականներ), ուսումնական նյութեր հանդիսացող գրականության ձեռքբերման, թվայնացման անհրաժեշտություն ունեցող գրականության առանձնացման (ՈՒԳԿԿ-ի տնօրեն-պրոռեկտորի ԺՊ-ի հանձնարարականներ) ամենամյա հայտ ներկայացնելու համար: Պլանավորվել է, որ հետայսու այդ գործընթացը առավելապես նախորդելու է յուրաքանչյուր ուստարվա ուսումնական ծանրաբեռնվածության նախնական կազմման գործընթացին և ամրագրված է լինելու ամբիոնի տարեկան օրինակելի աշխատանքային պլանում:

*Բարելավված ուսումնական ռեսուրսներ, մասնավորապես՝*

- վերազինված լինգաֆոնային կարիներտ,
- արդիականացված և տեխնիկապես հագեցած լսարաններ, կարիներտներ, ընթերցասրահ,
- համալրված և ըստ ուսումնական կարիքների թվայնացված գրադարանային ֆոնդ,
- ներառականությունն ապահովող անհրաժեշտ բարելավված միջավայր ուսումնառության արդյունավետ կազմակերպման համար:

Վերոնշյալ հանձնառությունների վերաբերյալ տեղեկատվությունը տե՛ս ԶՌԾ-ի Աղյուսակ 1.2.1. կատարողականի հաշվետվության մեջ:

*Գործընթացների էլեկտրոնային կառավարման ներդրված համակարգ*

Այսօր լավարկման փուլում է գործող էլեկտրոնային բազան: Բազայի լավարկման այս փուլի արդյունքում հնարավոր կլինի կառավարման որոշ ոլորտներում մասնակիորեն ներդնել էլեկտրոնային տարբերակը: Օրինակ՝ ՊԴ կազմի և ուսանողների հետ կապված հրամանների, ծանուցումների և այլ վերաբերող փաստաթղթերի փոխանցումը, պատշաճ տեղեկացումը: Նշենք նաև, որ հաշվետու տարում Մարդկային ռեսուրսների կառավարման, փաստաթղթաշրջանառության և իրավական ապահովման բաժնի կողմից լավարկվել են ՊԴ կազմի հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի, դրանց կից համաձայնագրերի ձևաչափերը և դրանցում ՊԴ կազմի կողմից ներկայացված էլիտստերի հասցեները այլևս համարվում են պաշտոնական էլեկտրոնային հաղորդակցման միջոցներ:

Իսկ վարչական ստորաբաժանումների էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման նպատակով արդեն իսկ կատարվել են նախապատրաստական աշխատանքներ:

Նշյալ հանձնառության կատարումը կբնութագրենք որպես ընթացքի մեջ գտնվող:

*Ռեսուրսների (ֆինանսական և այլն) արդյունավետ կառավարումն ապահովող մշակված և ներդրված մեխանիզմներ և ներքին իրավական ակտեր*

Վերոնշյալ հանձնառության վերաբերյալ տեղեկատվությունը մասնակիորեն ներկայացված ԶՌԾ-ի Աղյուսակ 1.2.1. կատարողականի հաշվետվության մեջ՝ ուսանողական կառույցների արդյունքահեն ֆինանսավորմանը վերաբերող մասում: Նշենք նաև, որ լավարկվել է ՇՊՀ-ի եկամուտների և ծախսերի նախահաշվի կազմման, հաստատման և փաստացի տվյալների (կատարողականի) վերլուծության ընթացակարգը, որն իրականացվել է Ֆինանսական ռեսուրսների կառավարման և հաշվառման բաժնի կողմից:

Ուսանողներին մատուցվող ծառայությունների լավարկված և ներդրված մեխանիզմներ և ընթացակարգեր, մասնավորապես՝

- ապահովել պարբերաբար և շարունակական տրամադրվող անվճար խորհրդատվություններ,
- աջակցել շրջանավարտների հետագա կարիերիային՝ պարբերաբար թարմացնելով նրանց տվյալների բազան,
- ընդլայնել ուսանողների՝ հետազոտական աշխատանքներում ներգրավվածությունը,
- ուսանողական կառույցների արդյունքահեն ֆինանսավորում,
- լավագույնների խրախուսման լավարկված մեխանիզմներ (ներառելով նաև կամավորությունը), հանգստի և ժամանցի բազմազանեցված ձևեր:

Վերոնշյալ հանձնառությունների վերաբերյալ տեղեկատվությունը մասնակիորեն ներկայացված է ԶՌԾ-ի Աղյուսակ 1.2.1. Աղյուսակ 1.4. 1. կատարողականների հաշվետվությունների մեջ:

Ինչ վերաբերում է **ընդլայնել ուսանողների՝ հետազոտական աշխատանքներում ներգրավվածությունը** հանձնառությանը, ապա նշենք, որ այն ապահովվում է մի շարք մեխանիզմների կիրառմամբ: Կարևոր է նշել, որ ՇՊՀ-ում գիտահետազոտական գործունեության ոլորտը, իր կանոնադրությանը համապատասխան, կարգավորում է Գիտական քաղաքականության և նորարարության կենտրոնը, որի կողմից, շահառուների և շահակիցների ակտիվ մասնակցության պայմաններում, հաշվետու տարում մշակվել և լավարկվել են փաստաթղթեր, որոնք կարգավորում են նաև ուսանողների հետազոտական գործունեությունը, ինչպես նաև սահմանում են վերջինիս զարգացմանը խթանող գործիքներ:

Այսպես, ներքին դրամաշնորհների /տե՛ս [Հիմնադրամում աշխատակիցներին և ուսանողներին գիտահետազոտական գործունեության առաջնահերթությունների ուղղությամբ ներբուհական դրամաշնորհի տրամադրման կարգ](#), [Հիմնադրամում աշխատակիցներին և ուսանողներին գիտահետազոտական գործունեության համար ներբուհական դրամաշնորհի տրամադրման կարգ](#)/ տրամադրման մրցույթների կարգերին համաձայն՝ պարտադիր պայման է հետազոտական խմբում առնվազն մեկ ուսանողի առկայությունը: Լավարկման արդյունքում ներդրվել է նոր գործիքակազմ, որի շնորհիվ, պահպանելով խմբի անդամների նախապես սահմանված ընդհանուր քանակը, տարբեր ժամանակահատվածներում թույլատրվում է խմբում ընդգրկելու տարբեր ուսանողների, ինչը հնարավորություն է ստեղծում ապահովելու նրանց էլ ավելի մեծ մասնակցայնությունը գիտահետազոտական ծրագրերում: Արդյունքում ստեղծվել է կայուն մեխանիզմ՝ խթանելու դասախոս-ուսանող համատեղ հետազոտական աշխատանքների իրականացումը: Նշենք նաև, որ [Հիմնադրամի աշխատակիցների և ուսանողների կողմից](#)



իրականացվող գիտահետազոտական գործունեության համար լրավճարի տրամադրման կարգի լավարկման արդյունքում լրավճար տրամադրվում է թե՛ աշխատակիցներին, թե՛ ուսումնառողներին:

Որպես գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածության խթանման միջոց՝ փոխվել է նաև մագիստրոսական թեզի գնահատման ռուբրիկը, որտեղ ավելացվել է հետևյալ բաղադրիչը. «Ուսանողի կողմից տպագրված հոդված (համահեղինակությամբ կամ առանց համահեղինակության) (5 միավոր), տպագրված/տպագրության փուլում գտնվող հոդվածի առկայություն՝ պարտադիր նշումով, որ հետազոտությունը կատարված է ՄԹ-ի շրջանակում»:

Որպես ներդրված գործիքների արդյունավետության ցուցիչ՝ դիտարկվելու է հաշվետու և առաջիկա 5 տարիների ընթացքում.

- ա) գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված ուսանողների թվաքանակի աճը,
- բ) ուսումնառողների մասնակցությամբ իրականացվող գիտահետազոտական ծրագրերի քանակական աճը,
- գ) ուսումնառողների հեղինակությամբ և/կամ համահեղինակությամբ տպագրված աշխատանքների քանակական աճը:

### 1.3. ԲԱՐՁՐՈՐԱԿ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Աղյուսակ 1.3.1.

ՇՊՀ-ի՝ 2023-2027թթ. Զարգացման ռազմավարական ծրագրի կատարողական

N	Խնդիրներ		Լուծումներ/գործողություններ	Լուծման/ գործողության իրականացման ժամանակա- հատվածը	Կատարողականի ցուցիչ
3. (1.3)	Բարձրորակ մարդկային ռեսուրսներ	1.3. 1	Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմերի ձևավորման և համալրման բարելավված ընթացակարգերի և մեխանիզմների մշակում և ներդրում՝ հիմնված կարիքների գնահատման վրա:	I փուլ  I եռամսյակ 2023 - III եռամսյակ 2024  Շարունակական ըստ կարիքի	<ul style="list-style-type: none"> <li>➤ Պրոֆեսորադասախոսական ու ուսումնաօժանդակ կազմերի ձևավորման և համալրման լավարկված և ներդրված կանոնակարգ ու մեխանիզմներ:</li> <li>➤ Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի աշխատանքի արդյունավետության գնահատման բազմագործոն նորացված ու գործող կարգ:</li> <li>➤ Պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ և վարչական համակազմերի վերապատրաստումների, վարչական և ուսումնաօժանդակ համակազմերի</li> </ul>

					ատեստավորման գործող կարգեր: ➤ Վերապատրաստված և/կամ ատեստավորված պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ ու վարչական համակազմեր:
--	--	--	--	--	--

- Պրոֆեսորադասախոսական ու ուսումնաօժանդակ կազմերի ձևավորման և համալրման լավարկված և ներդրված կանոնակարգ ու մեխանիզմներ:
- Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի աշխատանքի արդյունավետության գնահատման բազմագործոն նորացված ու գործող կարգ:
- Պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ և վարչական համակազմերի վերապատրաստումների, վարչական և ուսումնաօժանդակ համակազմերի ատեստավորման գործող կարգեր:
- Վերապատրաստված և/կամ ատեստավորված պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ ու վարչական համակազմեր: Կատարված աշխատանքներ՝

Բարձրորակ մարդկային ռեսուրսների ապահովման տեսանկյունից նշենք մեկ կարևոր գործիք, որը նախադրյալներ է ստեղծում ՊԴ կազմի համալրման համար: Այսպես՝ 2023-2024 ուստարվանից, երբ արդեն ներդրված է ՄԿԾ պատասխանատուի ինստիտուտը, ելակետ ունենալով ՄԿԾ-ների առարկայացանկը՝ ՈՒԳԿԿ-ի կողմից կազմվել է ՊԴ կազմի համար ներկայացվող պահանջները ներառող փաստաթուղթ՝ ՄԿԾ-ների իրականացման

ա) կայունությունը ապահովելու,

բ) իրականացման գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու համար:

Ինչ վերաբերում է ՊԴ կազմի բազմագործոնային գնահատմանը, ապա նշենք, որ հաշվետու տարում նախագծվել, մշակվել և 2024 թ.-ի հունվարի 18-ին ՇՊՀ-ի Գիտական խորհրդի հաստատման են ներկայացվել նորամշակ և լավարկված փաստաթղթեր, որոնցում համահնչեցվել են ՊԴ կազմի գործունեության գնահատման երեք հիմնական գործիքները՝ ՇՊՀ-ի

ուսանողների կողմից ՊԴ կազմի մասնագիտական, մանկավարժական և կազմակերպչական կոմպետենցիաների գնահատման հարցարանի, դասալսման արձանագրության, դասախոսի մասնագիտական, մանկավարժական և կազմակերպչական կոմպետենցիաների զարգացման կարիքների գնահատման (ինքնագնահատման) հարցարանի կիրառման համապատասխան ձևաչափերը: Նման համահնչեցումը հնարավորություն է ընձեռում չափման համադրելի/նույնական գործոնների միջոցով ձեռք բերելու ՊԴ կազմի գործունեության գնահատման արժանահավատ տեղեկատվություն:

ՊԴ կազմի գործունեության գնահատման համար կիրառվող գործիքներ են դասախոսի աշխատանքի անհատական պլանը, ՇՊՀ-ի ուսանողների կողմից ՊԴ կազմի մասնագիտական, մանկավարժական և կազմակերպչական կոմպետենցիաների գնահատման հարցարանը, դասախոսի մասնագիտական, մանկավարժական և կազմակերպչական կոմպետենցիաների զարգացման կարիքների գնահատման (ինքնագնահատման) հարցարանի, դասալսման ձևաթերթը ՇՊՀ-ի ՊԴ կազմի գործունեության որակի արդյունավետության վարկանիշային տարեկան գնահատման ձևաթերթը: Իսկ այս ձևաթերթերը շարունակական լավարկման ընթացք են ապրում՝ շնորհիվ ՇՊՀ-ի ՈՒԳԿԿ-ի և ՈԱԲ-ի սերտ, համագործակցային աշխատանքային հարաբերությունների:

Ինչ վերաբերում է ՊԴ և ՈԻՕ կազմերի վերապատրաստումներին, ապա նշենք, որ ՄԿԾ-ների բարելավման գործընթացի արդյունավետության ապահովման համար 2023թ. -ի հունիսի 5-ից 17-ն ՈՒԳԿԿ-ի կողմից ՇՊՀ-ի ներքին ռեսուրսներով «ՄԿԾ-ների բարելավում. մեխանիզմներ և գործիքակազմ» թեմայով վերապատրաստումներ են իրականացվել, միաժամանակ կատարվել է նաև ՊԴ կազմի մանկավարժական հմտությունների զարգացմանը ուղղված վերապատրաստումներ, որոնց մասին առավել մանրամասնորեն ներկայացված է սույն հաշվետվության **«Լավարկված ԿԾ-ներ»** բաժնում: Առաջիկայում բուհը նախատեսում է իրականացնել պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ, ինչպես նաև վարչական համակազմերի վերապատրաստումներ: Նշենք նաև, որ քննարկման փուլում են պրոֆեսորադասախոսական կազմի ատեստավորման հարցերը:

Աղյուսակ 1.3.2.

ԹՎԳԾ-ի կատարողական

N	Ակնկալվող արդյունքը՝ ըստ ԹՎԳԾ-ի		Նախատեսվող միջանկյալ արդյունքները՝ ըստ ԹՎԳԾ-ի	Լուծման/ գործողության իրականացման ժամանակահատվածը	Գնահատման հաշվետվության ձևը
3. (1.3)	5.1. ՊԴ և ՈւՕ կազմերի ձևավորման և համալրման, գործունեության արդյունավետության գնահատման և խրախուսման բարելավված և կիրարկված ընթացակարգեր և մեխանիզմներ	1.3. 1	5.1.1. Ներքին և արտաքին շահակիցների կողմից ՊԴ և ՈւՕ կազմերից ակնկալվող որակներ, գնահատված և վերլուծված կարիքներ  5.1.2 ՊԴ և ՈւՕ կազմերի ձևավորման և համալրման լավարկված ու ներդրված կանոնակարգ և մեխանիզմներ, մասնավորապես՝  ➤ մշակել որակական ցուցիչների վրա հիմնված ՊԴ կազմի մասնագիտական	I փուլ  I եռամսյակ 2023  -  III եռամսյակ 2024  Շարունակական՝ ըստ կարիքի	➤ Բենչմարքինգ և/կամ հաշվետվություն /ներ/ ➤ Ինքնավերլուծություն և/կամ հաշվետվություններ

		<p>որակավորումներին ներկայացվող հստակ չափանիշներ,</p> <ul style="list-style-type: none"> <li>➤ մշակել և ներդնել ՊԴ և ՈԻՕ կազմերի մեջ երիտասարդ և պրակտիկ ոլորտում լավ փորձ ունեցող մասնագետների ներգրավման և խրախուսման քաղաքականություն</li> <li>➤ այլ</li> </ul> <p>5.1.3. ՊԴ և ՈԻՕ կազմերի պարբերաբար գնահատման և վարկանիշավորման կիրառվող մեխանիզմներ և լավարկված ընթացակարգ, մասնավորապես`</p> <ul style="list-style-type: none"> <li>➤ ապահովել գործող մեխանիզմներ ՊԴ և ՈԻՕ կազմերի պարբերաբար գնահատման և դրա արդյունքների հետագա կիրառման համար,</li> </ul>		
--	--	---	--	--

			<ul style="list-style-type: none"> <li>➤ <i>ապահովել ՊԴ, ՈԻՕ և վարչական կազմերի վերապատրաստումներ՝ ըստ անհրաժեշտության,</i></li> <li>➤ <i>ըստ կարիքի՝ իրականացնել ՈԻՕ և վարչական կազմերի ատեստավորումներ,</i></li> <li>➤ <i>այլ:</i></li> </ul>		
--	--	--	---	--	--

*5.1.1. Ներքին և արտաքին շահակիցների կողմից ՊԴ և ՈւՕ կազմերից ակնկալվող որակներ, գնահատված և վերլուծված կարիքներ*

*5.1.2 ՊԴ և ՈւՕ կազմերի ձևավորման և համալրման լավարկված ու ներդրված կանոնակարգ և մեխանիզմներ, մասնավորապես՝*

- *մշակել որակական ցուցիչների վրա հիմնված ՊԴ կազմի մասնագիտական որակավորումներին ներկայացվող հստակ չափանիշներ,*
- *մշակել և ներդնել ՊԴ և ՈԻՕ կազմերի մեջ երիտասարդ և պրակտիկ ոլորտում լավ փորձ ունեցող մասնագետների ներգրավման և խրախուսման քաղաքականություն*
- *այլ:*

*5.1.3. ՊԴ և ՈւՕ կազմերի պարբերաբար գնահատման և վարկանիշավորման կիրառվող մեխանիզմներ և լավարկված ընթացակարգ, մասնավորապես՝*

- *ապահովել գործող մեխանիզմներ ՊԴ և ՈԻՕ կազմերի պարբերաբար գնահատման և դրա արդյունքների հետագա կիրառման համար,*
- *ապահովել ՊԴ, ՈԻՕ և վարչական կազմերի վերապատրաստումներ՝ ըստ անհրաժեշտության,*
- *ըստ կարիքի՝ իրականացնել ՈԻՕ և վարչական կազմերի ատեստավորումներ,*
- *այլ:*

*«Ներքին և արտաքին շահակիցների կողմից ՊԴ և ՈւՕ կազմերից ակնկալվող որակներ, գնահատված և վերլուծված կարիքներ»*

*«ՊԴ և ՈւՕ կազմերի ձևավորման և համալրման լավարկված ու ներդրված կանոնակարգ և մեխանիզմներ»*

Վերոնշյալ հանձնառությունների համատեքստում առանձնանում է ԿԾ-ների իրականացման համար անհրաժեշտ մասնագիտական որակներով ՊԴ և ՈԻՕ կազմերի առկայությունը, որն ապահովում է թողարկվող ԿԾ-ների կայունությունը: ՊԴ

և ՈԻՕ կազմերից ակնկալվող որակների, գնահատված և վերլուծված կարիքների մասին տեղեկատվության ձեռքբերման համար հաշվետու տարում ներդրվել է մի մեխանիզմ, որով համահնչեցվել են ՊԴ կազմի գործունեության գնահատման երեք հիմնական գործիքները՝ ՇՊՀ-ի ուսանողների կողմից ՊԴ կազմի մասնագիտական, մանկավարժական և կազմակերպչական կոմպետենցիաների գնահատման հարցարանը, դասալսման արձանագրության ձևաչափը, դասախոսի մասնագիտական, մանկավարժական և կազմակերպչական կոմպետենցիաների զարգացման կարիքների գնահատման (ինքնագնահատման) հարցարանը: Ներդրված նման մեխանիզմը հնարավորություն կընձեռի ներքին շահակիցների կողմից գնահատման արդյունքների հենքի վրա կազմակերպել հետագա քայլերը: Նշենք նաև, որ ՈԻԳԿԿ-ի կողմից ներդրվել է ևս մեկ գործիք, որը հնարավորություն կտա արտաքին շահակիցներից ձեռք բերել ՊԴ կազմի գործունեության վերաբերյալ տեղեկատվություն, այն է՝ պրակտիկայի ավարտին գործատուների շրջանում իրականացվող հարցումների արդյունքների վերլուծությունը: Ընդ որում, հաշվետու տարին ՈԻԳԿԿ-ն համարում է այդ հարցարանի ապրոբացիոն շրջան, և առաջիկայում հարցարանը լավարկվելու է այս դիտանկյունից ևս:

Միաժամանակ, ՇՊՀ-ն ընթանում է կրթական համակարգում իրականացվող փոփոխություններին համընթաց և դրանց համապատասխան ՊԴ կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները ենթարկվում են փոփոխությունների: Նշենք, որ հաշվետու տարվանից սկսած ՊԴ կազմի նկատմամբ առաջնային պահանջները այլևս ամրագրված են ՄԿԾ-ի մասնագրի մաս կազմող Առարկայական նկարագրիչների մեջ: Հաշվետու տարվա ավարտին ՈԻԳԿԿ-ի կողմից մասնագիտական ամբիոններին տրվել է մշակված համապատասխան ձևաչափ, որը լրացվել է ՄԿԾ պատասխանատուի կողմից, և որում դասավանդվող դասընթացները իրականացնելու իրավունքի վերապահման ժամանակ հաշվի է առնվել համապատասխան բազային մասնագիտական կրթությունը, գիտական աստիճան/կոչումը, գիտական հետաքրքրությունների շրջանակը և ոլորտում ունեցած աշխատանքային փորձը:

Գործող [ԳՊՄԻ-ի ՊԴ և ՈւՕ կազմերի ձևավորման կանոնակարգը](#) և [ԳՊՄԻ-ի դասախոսի ծանրաբեռնվածության ձևավորման հիմնական նորմերը](#) այն հիմնական նորմատիվային փաստաթղթերն են, որոնք այժմ կարգավորում են ոլորտն ու նպաստում մատուցվող կրթական ծառայությունների որակի ապահովմանը: Նշեմ, որ այդ կարգերի լավարկումը ՈԻԳԿԿ-ն դիտում է որպես իր առաջնային խնդիրներից մեկը: Ընդ որում, նշենք, որ նշված կարգերից 2-րդի աշխատանքային տարբերակը պատրաստ է համալսարանական հանրության լայն քննարկումներին ներկայացման համար: Իսկ հաշվետու տարում նմանբովանդակ մի շարք հարցեր լուծումներ ստացել են Ռեկտորի հրամաններով, ԳԽ-ի որոշումներով, օրինակ՝ **հրավիրյալ**



**դասախոսի ինստիտուտի ներդրումը:**

Հաշվետու տարում ՊԴ, ՈւՕ կազմերի ընտրության քաղաքականության իրականացման տեսանկյունից առաջընթաց էր պաշտոնների նկարագրերի ներդրումը (մեկնարկը՝ 2020թ., հաջորդիվ՝ 2022թ., 2023թ.), որոնցում սահմանված են պաշտոններին ներկայացվող պահանջները, աշխատանքի կազմակերպման կարգը և պատասխանատվության շրջանակը, աշխատանքային պարտականությունները /հիմքերը՝ Մարդկային ռեսուրսների կառավարման, փաստաթղթաշրջանառության և իրավական ապահովման բաժնում/:

Մասնավորապես, հաշվետու տարում ՄԿԾ-ների բարելավման գործողություններին համընթաց, առարկայական նկարագրիչները լավարկելիս, վերջիններիս ձևաչափում հավելվել է կետ, որտեղ նշվում է տվյալ դասընթացը դասավանդողի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները:

*Ապահովելու համար ըստ անհրաժեշտության ՊԴ, ՈՒՕ և վարչական կազմերի վերապատրաստումներ* հրամայականի առնչությամբ փաստենք, որ հաշվետու տարում անհրաժեշտություն կար ՄԿԾ-ների բարելավման գործընթացի մեկնարկից առաջ ՊԴ կազմի վերապատրաստման, մասնավորապես, «ՄԿԾ-ների բարելավում. մեխանիզմներ և գործիքակազմ» թեմայով, որին մասնակցել են նաև վարչական աշխատողները:

Առաջիկայում նախատեսվում է լուծել «*Ըստ կարիքի՝ իրականացնել ՈՒՕ և վարչական կազմերի ատեստավորում*» հանձնառությունը՝ պահպանելով ժամանակային պարտավորությունները:

### 1.4. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Աղյուսակ 1.4.1.

ՇՊՀ-ի՝ 2023-2027թթ. Զարգացման ռազմավարական ծրագրի կատարողական

N	Խնդիրներ		Լուծումներ/գործողություններ	Լուծման/ գործողության իրականացման ժամանակա- հատվածը	Կատարողականի ցուցիչ
4. (1.4)	Արդյունավետ կառավարում	1.4. 1	Կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով կառուցվածքային փոփոխությունների իրականացում՝ միտված ՇՊՀ-ի ռազմավարական առաջնահերթություններին:	2022-2023 ուստարվա II կիսամյակ	<ul style="list-style-type: none"> <li>➤ Կառավարման ուղղաձիգ և հորիզոնական կապերն ապահովող փոփոխված նոր կառուցվածք:</li> <li>➤ Կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության պլանավորման, մշտադիտարկման, գնահատման և բարելավման գործող կարգեր:</li> <li>➤ Գործող էլեկտրոնային հավելված-հարթակ (որում համալսարանի և՛ ուսանողը, և՛ աշխատակիցն անձնական էլեկտրոնային էջում կգտնի իր ուսումնառությանը և/կամ աշխատանքային գործունեությանը վերաբերող ողջ տեղեկատվական,</li> </ul>
		1.4. 3	Աշխատանքի արդյունավետության բարձրացման նպատակով ուսումնական և անձնակազմի կառավարման համակարգերում	2022-2023 ուստարվա II կիսամյակ – 2026-2027 ուստարվա II կիսամյակ	

			Էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրում:		նորմատիվ իրավական փաթեթը):
		1.4.4	Կոռուպցիոն երևույթների նկատմամբ անհանդուրժողականության մշակույթի ձևավորում և զարգացում:	I փուլ 2022-2023 ուստարվա II կիսամյակ – 2023-2024 ուստարվա I կիսամյակ Շարունակական ըստ կարիքի	<ul style="list-style-type: none"> <li>➤ Կոռուպցիոն երևույթների կանխարգելմանը նպաստող վերանայված և բարելավված նորմատիվ իրավական ակտեր:</li> <li>➤ Լավագույնների խրախուսման ներդրված և գործող կարգ («Լավագույն աշակերտ», «Լավագույն ուսանող», «Լավագույն աշխատակից» և այլ անվանակարգեր, պարգևատրումների, նյութական և բարոյական խրախուսման այլ ձևեր):</li> </ul>

**Կառավարման ուղղաձիգ և հորիզոնական կապերն ապահովող փոփոխված նոր կառուցվածք:**

**Կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության պլանավորման, մշտադիտարկման, գնահատման և բարելավման գործող կարգեր:**

[2023-2027թթ.-ի ԶՌԾ](#)-ի հիմնադրույթների իրականացման առաջնային երաշխիքը ՇՊՀ-ն համարում է կառուցվածքային համապատասխանությունը ռազմավարական նպատակներին: Հիմք ընդունելով [ՇՊՀ-ի ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցը](#), ՇՊՀ-ում 2022-2023թթ.-ին երկու փուլով իրականացվել են կառուցվածքային փոփոխություններ:

Բարեփոխումների 1-ին (կրթական) փուլում իրականացվել է ֆակուլտետների և ամբիոնների ձևավորում և վերակազմավորում (հիմք՝ [ՀԽ-ի 23.06.2022թ.-ի N9.1](#), [23.06.2022թ.-ի N9.2 որոշումներ](#))՝ նպատակ ունենալով ապահովելու կրթագիտական գործընթացների արդյունավետ կառավարում, որի արդյունքում հաշվետու տարվանից ՇՊՀ-ն իր գործունեությունը կազմակերպում է **երեք ֆակուլտետներով և տասնմեկ ամբիոններով**: Այսպես՝ ՇՊՀ-ի

Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետում ներառված են Մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների, Տնտեսագիտության, Աշխարհագրության և սերվիսի, Կենսաբանության և քիմիայի ամբիոնները, Հումանիտար գիտությունների ֆակուլտետում՝ Հայոց լեզվի և գրականության, Օտար լեզուների և գրականության, Պատմության և իրավագիտության ամբիոնները, Հասարակական գիտությունների ֆակուլտետում՝ Մանկավարժության, Հոգեբանության և սոցիոլոգիայի, Սպորտի և արվեստի ամբիոնները: Առանձնակի կարգավիճակով գործում է Ռազմական ամբիոնը (հիմք՝ Ռեկտորի՝ 15.08.2022թ. Հրաման N 81):

Բարեփոխումների 2-րդ (վարչական) փուլում իրականացվել են վարչական կառուցվածքի ձևավորում և վերակազմավորում (հիմք՝ [ՀԽ-ի 27.05.2023թ. N17.1 որոշում](#))՝ նպատակ ունենալով ապահովելու ռազմավարական առաջնահերթությունների արդյունավետ իրականացում, ստորաբաժանումների ներդաշնակ փոխգործակցություն, հստակ արտահայտված կառավարման ուղղաձիգ և հորիզոնական կապեր՝ այդ ամենով հանդերձ, ի վերջո ապահովելու կառավարման արդյունավետություն: Ըստ այդմ, ձևավորվել են [2023-2027թթ.-ի ԶՌԾ](#)-ով ամրագրված երեք գերակա նպատակները և վերջիններիս ապահովման պատասխանատվությունը կրող երեք հիմնական ստորաբաժանումները՝ ՈՒԳԿԿ, ԳՔՆԿ ու ԱՀԿ: Ռեկտորի անմիջական ենթակայությամբ ձևավորվել են ՈԱ և ՄԿԿ բաժինները: Հիմնադրամի, վերոգրյալ կենտրոնների և բաժինների բնականոն գործունեության ապահովման նպատակով ձևավորվել են նաև ըստ գործառույթների սպասարկող և օժանդակող հետևյալ՝ ՄՌԿՓԻԱ, ՖՌԿՀ, ՏԳԵՍ և Գրադարան բաժինները, որոնց գործունեությունը համակարգում է պրեռեկտոր-աշխատակազմի ղեկավարը:

Կառուցվածքային փոփոխությունների երկու փուլերում էլ ՇՊՀ-ի կառուցվածքի թե՛ աշխատանքային, և թե՛ նախագծային տարբերակները քննարկվել են ներքին և արտաքին շահակից ու շահառու տարբեր խմբերի հետ՝ [ամբիոններ](#), [ֆակուլտետներ](#), ՖԽ-ներ, ՇՊՀ-ի կառուցվածքային ստորաբաժանումներ ([1](#), [2](#), [3](#)), [ԳԽ](#), [ՀԽ](#): Ավելին, Երևանի պետական համալսարանից և ՀՀ Պետական կառավարման ակադեմիայից բուհի խնդրանքով ներկայացվել են կարծիքներ ՇՊՀ-ի առաջարկվող նոր կառուցվածքի վերաբերյալ և ըստ այդմ երկու կառույցից էլ ստացվել են մասնագիտական-փորձագիտական կարծիքներ (հիմքերը՝ ՈՒԳԿԿ-ում, փաստաթղթային հիմքեր՝ հանդիպումների ժամանակացույց, կարծիքներ, արձանագրություններ, որոշումներ և այլն):

Համալսարանի կառավարման մարմինների և կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունների շրջանակը, գործունեությունը և միմյանց հետ փոխհարաբերությունները կարգավորվում են [Հիմնադրամի կանոնադրությամբ](#) և ներքին

իրավական մի շարք ակտերով, մասնավորապես՝ [ՀԽ-ի աշխատակարգով](#), [ԳԽ-ի կանոնակարգով](#), ինչպես նաև վերոգրյալ կառուցվածքային փոփոխություններից հետո կառուցվածքային ստորաբաժանումների նոր մշակված, ԳԽ-ի կողմից հաստատված և գործածության մեջ դրված կանոնադրություններով:

Համաձայն [ՇՊՀ-ի զարգացման ՌԾ-ի մշակման \(լավարկման\) և հաշվետվողականության ապահովման /նոր խմբագրությամբ/ հայեցակարգի՝](#) հաստատված ՌԾ-ի հիման վրա մշակվել են կենտրոնների աշխատանքային պլանները: Ըստ այդմ, [ՇՊՀ-ի՝ 2023-2027թթ.-ի Զարգացման ՌԾ-ում](#) ամրագրված նպատակները, վերջիններից բխող խնդիրներն ու գործողությունները ամբողջությամբ վերաբաշխվել են երեք կենտրոնների հնգամյա աշխատանքային ծրագրերում. մշակվել և 31.08.2023թ. գործածության մեջ են դրվել երեք կենտրոնների՝ 2023-2027թթ.-ի հնգամյա/ամենամյա աշխատանքային ծրագրերը, որոնցում յուրաքանչյուր գործողության համար նշված է կատարման ժամանակահատված և որպես ակնկալվող արդյունք՝ ձևակերպված են հստակ, չափելի քանակական և/կամ որակական ցուցիչներ: Այդ ծրագրերում ամբողջությամբ ներառվել են նաև ՇՊՀ-ի Ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական գեկույցի հիման վրա կազմված Հիմնադրամի Ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական գեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագրով նախատեսված բոլոր գործողությունները՝ իրենց չափելի վերջնարդյունքներով: Հետադարձ մեխանիզմը հիմնված է հաշվետվողականության համակարգի վրա:

Ինստիտուցիոնալ մակարդակով ապահովված են նաև [Հիմնադրամի՝ 2023-2027թթ.-ի Զարգացման ՌԾ-ի](#) և կենտրոնների գործունեության հաշվետվողականության, վերանայման և բարելավման մեխանիզմները: Այսպես՝ համաձայն [Հիմնադրամի զարգացման ՌԾ-ի մշակման \(լավարկման\) և հաշվետվողականության ապահովման /նոր խմբագրությամբ/ հայեցակարգի](#).

ա) Կենտրոնները ԳԽ-ին ներկայացվող իրենց գործունեության ամենամյա հաշվետվություններում որպես առանձին բաժին՝ ընդգրկում են իրենց տարեկան աշխատանքային պլանների կատարողականները, որոնց մասով վերոնշյալ հայեցակարգով սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովը ներկայացնում է հարակից գեկույց (ըստ անհրաժեշտության, նշելով նաև առաջիկա աշխատանքային պլանների վերանայման, բարելավման առաջարկներ),

բ) ՌԾ-ի մշակման (լավարկման), իրականացման արդյունքների վերահսկման և բարելավման համար, Ռեկտորի հրամանով ձևավորվում է աշխատանքային հանձնախումբ, որը, հիմնվելով ԳԽ-ի՝ կենտրոնների տարեկան հաշվետվություններին առնչվող որոշումների, ՈԱԲ-ի կողմից տարբեր գործընթացների արդյունավետության գնահատման համար կատարված հարցումների արդյունքների վերլուծությունների, բուհի շահառուների և շահակիցների հետ ամենամյա բնույթ կրող

հանդիպումների ընթացքում վերհանված խնդիրների վրա, կազմում և Ռեկտորին է ներկայացնում Զարգացման ռազմավարական ծրագրի կատարողականի ամենամյա հաշվետվություն և ՌԾ-ի, ըստ այդմ, նաև կենտրոնների ամենամյա աշխատանքային ծրագրերի բարելավման առաջարկներ:

ԳԽ-ին կենտրոնների՝ նման ձևաչափով հաշվետվություններ առաջին անգամ ներկայացվելու են 2024թ.-ին՝ 2022-2023 ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ:

Այս ամենը բուհի գործունեության տիրույթում հնարավորություններ է ընձեռելու կատարողականների արդյունավետության բարձրացման, համագործակցության ընդլայնման, ռիսկերի կառավարման համար, որոնց արդյունքում ՇՊՀ-ն հավակնում է հասնելու հանրային վստահության աճող քվեի և վարկանիշի բարձրացմանը:

**Կոռուպցիոն երևույթների կանխարգելմանը նպաստող վերանայված և բարելավված նորմատիվ իրավական ակտեր:**

Նշենք, որ նմանատիպ երևույթների կանխարգելման նպատակով բուհը մի շարք իրավական ակտերում կատարել է լավարկումներ, ինչպես նաև ներդրել է մեխանիզմներ: Այս հանձնառության կատարման մասին տե՛ս սույն հաշվետվության «Կրթական ծրագրերի (ԿԾ-ների) բարեփոխմանը միտված ներդրված և գործող մեխանիզմներ ու ընթացակարգեր» բաժնում:

**Լավագույնների խրախուսման ներդրված և գործող կարգ («Լավագույն աշակերտ», «Լավագույն ուսանող», «Լավագույն աշխատակից» և այլ անվանակարգեր, պարգևատրումների, նյութական և բարոյական խրախուսման այլ ձևեր):**

Հաշվետու տարում այս հարցը գտնվել է ակտիվ քննարկման փուլում: Քննարկումների արդյունքները կարիք ունեն պատշաճ փաստաթղթավորման: Այդ աշխատանքները իրականացվելու են 2024թ.-ին:

**Աղյուսակ 1.4. 2.**

**ԹՎԳԾ-ի կատարողական**

N	Ակնկալվող արդյունքը՝ ըստ		Նախատեսվող միջանկյալ արդյունքները՝	Լուծման/ գործողության	Գնահատման հաշվետվության ձևը
---	--------------------------	--	------------------------------------	-----------------------	-----------------------------

	<i>ԹՎԳԾ-ի</i>		<i>ըստ ԹՎԳԾ-ի</i>	<i>իրականացման ժամանակա- հատվածը</i>	
4. (1.4)	2.2 Բուհի նազմավարական առաջնահերթություն ներին միտված, ՄՈՒՀ-ի հետագա զարգացումն ապահովող կառավարման ուղղաձիգ և հորիզոնական կապերն ապահովող փոփոխված և ներդրված կառուցվածք և լավարկված կառավարման համակարգ	1.4. 1	2.2.1 Վեր հանված և վերլուծված կարիքներ, փորձագիտական հատուկ կարծիքներ 2.2.2 Բուհի կառուցվածքային ստորաբաժանումների ուղղաձիգ հիերարխիկ և հորիզոնական կապերն ապահովող կառուցվածք 2.2.3 Կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունը կանոնակարգող ներդրված, լրամշակված, լավարկված ներքին իրավական ակտեր 2.2.4 Արդյունավետ կառավարումն ապահովող մշակված, բարելավված և ներդրված մեխանիզմներ, մասնավորապես՝ ➤ էթիկայի սկզբունքներ ➤ ներքին կարգապահական	2022-2023 ուստարվա II կիսամյակ	Ինքնավերլուծություն և/կամ հաշվետվություններ Որոշումներ և/կամ ինքնավերլուծություն, և/կամ հրամաններ Որակական և քանակական վերլուծություններ

			<p align="center"><i>կանոններ</i></p> <ul style="list-style-type: none"> <li>➤ <i>կոռուպցիոն երևույթների կանխարգելմանը նպաստող վերանայված և բարելավված մեխանիզմներ</i></li> <li>➤ <i>ծրագրային բյուջետավորման ներդրված համակարգ,</i></li> <li>➤ <i>այլընտրանքային եկամուտների ապահովման նախանշված ուղիներ,</i></li> <li>➤ <i>բարձրագույն կրթության զարգացման մարտահրավերներին համահունչ ՄՈՒՀ-ի հետագա զարգացումն ապահովող առանձնացված ֆինանսական ռեսուրսներ</i></li> </ul>		
--	--	--	--	--	--

2.2.1 Վեր հանված և վերլուծված կարիքներ, փորձագիտական հաստուկ կարծիքներ

2.2.2 Բուհի կառուցվածքային ստորաբաժանումների ուղղաձիգ հիերարխիկ և հորիզոնական կապերն ապահովող կառուցվածք

2.2.3 Կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունը կանոնակարգող ներդրված, լրամշակված, լավարկված ներքին իրավական ակտեր

Որոշումների պլանավորման և իրականացման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ու շահառուների (ըստ անհրաժեշտության՝ նաև փորձագետների) ներգրավվածության, մասնակցայնության և թափանցիկության ապահովման նպատակով ՇՊՀ-ն հաշվետու տարում պաշտոնական shsu.am կայքէջում գործարկել է «Նախագծերի քննարկում»



պատուհանը, որտեղ, ըստ 2022 թվականի հոկտեմբերի 11-ին Գիտական խորհրդում հաստատված « «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի՝ Գիտական խորհրդի հաստատմանը ներկայացվող ներքին իրավական ակտերի փոփոխությունների, լրացումների, նախագծերի վերաբերյալ քննարկումների կազմակերպման, անցկացման և ամփոփման կարգի», Գիտական խորհրդի կողմից հաստատվելիք բոլոր փաստաթղթերը պարտադիր ենթակա են քննարկման: «Նախագծերի քննարկում» հարթակը հաջողությամբ կիրառվեց ՇՊՀ-ի համար կարևոր փաստաթղթի՝ Զարգացման ՌԾ-ի հանրային քննարկման համար ևս (Փաստաթուղթ N5): Նշենք նաև, որ Զարգացման ռազմավարական ծրագրի մշակման գործընթացում առաջնային են եղել նաև ֆոկլուսիմբային քննարկումները, հանդիպումները, հարցումները՝ հետադարձ կապի ապահովմամբ: Արտաքին շահակիցների ներգրավման նպատակով կիրառվել են տարբեր մեխանիզմներ, ինչպես օրինակ՝ 2022թ. Google. form հարթակում գործատուների և շրջանավարտների շրջանում իրականացված հարցումները (Հավելված 2):

Բուհի առաքելությանն ու տեսլականին համահունչ՝ ձևավորված ուսանողակենտրոն միջավայրում և սոցիալական գործընկերության մթնոլորտում ուղենշվում են ՇՊՀ-ի զարգացման երեք նպատակները՝ որակյալ կրթություն, արդիական և նորարար գիտական հետազոտություններ, հանրային ներգրավում: Ձևակերպված են նպատակներից բխող խնդիրներն ու վերջններիս իրականացման գործողությունները, նաև դրանց կատարողականի չափելի ցուցիչները:

ԹՎԳԾ-ի նշված արդյունքները ներկայացված են ԶՌԾ-ի Աղյուսակ 1.4.1. -ի ՇՊՀ-ի՝ 2023-2027թթ. Զարգացման ռազմավարական ծրագրի կատարողականի ներքո:

*2.2.4 Արդյունավետ կառավարումն ապահովող մշակված, բարելավված և ներդրված մեխանիզմներ, մասնավորապես՝*

- *էթիկայի սկզբունքներ*
- *ներքին կարգապահական կանոններ*
- *կոռուպցիոն երևույթների կանխարգելմանը նպաստող վերանայված և բարելավված մեխանիզմներ*
- *ծրագրային բյուջետավորման ներդրված համակարգ,*
- *այլընտրանքային եկամուտների ապահովման նախանշված ուղիներ,*
- *բարձրագույն կրթության զարգացման մարտահրավերներին համահունչ ՄՈՒՀ-ի հետագա զարգացումն ապահովող առանձնացված ֆինանսական ռեսուրսներ:*

Սույն հաշվետվության «Կրթական ծրագրերի (ԿԾ-ների) բարեփոխմանը միտված ներդրված և գործող մեխանիզմներ ու քննադատական գործընթացներ» բաժնում ներկայացված են ԹՎԳԾ-ով նախատեսվող միջանկյալ արդյունքների՝ *էթիկայի սկզբունքների, ներքին կարգապահական կանոնների և կոռուպցիոն երևույթների կանխարգելմանը նպաստող վերանայված և բարելավված մեխանիզմների* մասին համապարփակ տեղեկատվություն:

*Ծրագրային բյուջետավորման ներդրված համակարգ* նախատեսվող միջանկյալ արդյունքի մասին նշենք, որ ուսանողական կառույցների արդյունքահեն ֆինանսավորմանը անդրադարձ է եղել հաշվետվության վերոնշյալ բաժնում: Իսկ ընդհանուր առմամբ ծրագրային բյուջետավորման շրջանակում նախահաշիվը կազմելու համար, համաձայն հաշվետու տարում լավարկված ՇՊՀ-ի եկամուտների և ծախսերի նախահաշիվի կազմման, հաստատման և փաստացի տվյալների (կատարողականի) վերլուծության քննադատական գի, պլանավորվող տարվան վերաբերող ծախսային պահանջների վերաբերյալ տվյալները հավաքագրվում են կառուցվածքային բոլոր ստորաբաժանումներից և բուհի ՈԻԽ-ից: Այդ տվյալները ներկայացվում են Ֆինանսական ռեսուրսների կառավարման և հաշվառման բաժնին՝ համապատասխան ձևաչափերով: Բաժնի կողմից այդ տվյալները համակարգվում և գնահատվում են ֆինանսական առումով:

Ինչ վերաբերում է *այլընտրանքային եկամուտների ապահովման* նախանշված միջանկյալ արդյունքին, ապա նշենք, որ ՇՊՀ-ի համար գերակա խնդիր է ֆինանսական մուտքերի դիվերսիֆիկացումը, ինչի համար ստեղծված են ինստիտուցիոնալ հիմքեր, մասնավորապես, վերապատրաստումների իրականացում, կրթական լրացուցիչ ծառայությունների մատուցում, դրամաշնորհների ներգրավում, գիտահետազոտական արդյունքների առևտրայնացում: Եթե հաշվետու տարում իրականացվել են վերապատրաստումներ արտաքին շահառուների համար՝ ապահովելով որոշակի եկամուտ, ապա նշված մյուս ուղիներով, ինչպես նաև բարձրագույն կրթության զարգացման մարտահրավերներին համահունչ ՄՈՒՀ-ի հետագա զարգացումն ապահովող առանձնացված ֆինանսական ռեսուրսների ապահովման աշխատանքները առջևում են:

*Բարձրագույն կրթության զարգացման մարտահրավերներին համահունչ ՄՈՒՀ-ի հետագա զարգացումն ապահովող առանձնացված ֆինանսական ռեսուրսներ* նախանշված միջանկյալ արդյունքի առումով նշենք, որ համաձայն լավարկված ՇՊՀ-ի եկամուտների և ծախսերի նախահաշիվի կազմման, հաստատման և փաստացի տվյալների (կատարողականի) վերլուծության քննադատական գի՝ նախահաշիվը կազմելիս հաշվի են առնվում ԶՈԾ-ում ամրագրված նպատակները, ընդ որում այս գործոնը գերակա է համարվում մնացածի նկատմամբ և այս պարագայում նույնիսկ հաշվի չի առնվում ինքնաձախսաձածկում կամ որոշակի շահույթ ապահովելու խնդիրը:

ՇՊՀ-ում ռեսուրսների բաշխման մեխանիզմները և համապատասխան գործընթացները կարգավորվում են գործընթացի մասնակիցներին վերապահված լիազորությունների և գործառույթների ներքո: Շահառուների շրջանում (ուսանողներ, շրջանավարտներ, ՊԴ կազմ և այլն) ամենամյա պարբերական բնույթ կրող հարցումների քանակական և որակական վերլուծությունները փաստում են, որ վերջիններս, ընդհանուր առմամբ, բավարարված են առկա նյութատեխնիկական ռեսուրսներից (հիմքերը՝ ՈԱ բաժնում):

1.5. ՄԻԶԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Աղյուսակ 1.5.1.

ՇՂՀ-ի՝ 2023-2027թթ. Զարգացման ռազմավարական ծրագրի կատարողական

N	Խնդիրներ		Լուծումներ/գործողություններ	Լուծման/ գործողության իրականացման ժամանակահատվածը	Կատարողականի ցուցիչ
5. (1.5)	Միջազգայնացում և համագործակցություն	1.5. 2	Աշխատակազմի վերապատրաստում՝ միտված դրամաշնորհային ծրագրեր գրելու և ղեկավարելու կարողությունների ու հմտությունների զարգացմանը:	I փուլ  2022-2023 ուստարվա II կիսամյակ  – 2023-2024 ուստարվա II կիսամյակ  Շարունակական՝ ըստ կարիքի	<ul style="list-style-type: none"> <li>➤ Դրամաշնորհային ծրագրեր կազմելու վերաբերյալ ուղեցույց:</li> <li>➤ Դրամաշնորհային ծրագրերին մասնակցության քանակական աճ:</li> <li>➤ Տարեկան առնվազն 5 հրավիրյալ պրոֆետոր, դոցենտ:</li> </ul>
		1.5. 3	Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների միջև հորիզոնական կապերի	I փուլ  2022-2023 ուստարվա II	

			խթանում ու զարգացում՝ դրամաշնորհային ծրագրեր գրելու և դեկավարելու նպատակով:	կիսամյակ – 2023-2024 ուստարվա II կիսամյակ  Շարունակակ ան՝ ըստ կարիքի	
--	--	--	--	---	--

Միջազգայնացում և համագործակցություն խնդրի կատարումը հաշվետու ժամանակահատվածում օբյեկտիվ պատճառներով մասնակիորեն հետաձգվել է հատկապես Աշխատակազմի վերապատրաստում՝ միտված դրամաշնորհային ծրագրեր գրելու և դեկավարելու կարողությունների ու հմտությունների զարգացմանը գործողության առումով: Նշենք, որ 2024 թ.-ին նախատեսվում է իրականացնել նման վերապատրաստում՝ արդեն իսկ ունենալով համապատասխան պայմանավորվածություններ: Նմանատիպ վերապատրաստումից հետո առավել արդյունավետ կլինի իրավական այնպիսի փաստաթղթի ստեղծումը, ինչպիսին է Դրամաշնորհային ծրագրեր կազմելու վերաբերյալ ուղեցույց:

Իսկ ինչ վերաբերում է Դրամաշնորհային ծրագրերին մասնակցության քանակական աճ կատարողականի ցուցիչին, ապա նշենք, որ հաշվետու տարում Արտաքին համագործակցության կենտրոնի կողմից իրականացվել է «Նշխարներ Շիրակի քանավոր մշակույթից» ծրագիրը ԿԳՄՄՆ-ի «Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության» դրամաշնորհային ծրագրի շրջանակում: Նշված ծրագրի մասին տեղեկատվությունը ներկայացված է ՇՊՀ-ի կայքէջում: ՈՒԳԿԿ-ն երկու դրամաշնորհային ծրագիր է ներկայացրել, որոնք սակայն չեն հաղթել: Դրանցից առաջինը ԿԳՄՄՆ-ի կողմից հայտարարված «ՀՀԿԳՄՄՆԴՄՄԺ-09» ծածկագրով դրամաշնորհային մրցույթին է ներկայացվել «Վերադարձ ակունքներին» վերտառությամբ ծրագիրը, երկրորդը՝ ԿԳՄՄՆ-ի կողմից հայտարարված « «ԵՔ-ԴՄ-ՀՅ-04/23» ծածկագրով դրամաշնորհային մրցույթին է ներկայացվել «Հայրենաճանաչությանը միտված նախաձեռնությունների (այդ թվում արշավների, գիտաժողովների, օլիմպիադաների և այլն) խթանում, այդ թվում՝ Սփյուռքի և Արցախի երիտասարդների ակտիվ ներգրավմամբ» ծրագիրը: Նշենք, որ Կենտրոնը շարունակելու է նման ծրագրերին իր մասնակցությունը:

Հրավիրյալ պրոֆեսորի, դոցենտի ինստիտուտի զարգացում և կայացում:

ՇՊՀ-ն ռազմավարական հանձնառություն ունի ուսումնական գործընթացում ներգրավելու գիտական հիմնարկների, հաստատությունների ոլորտում հայտնի մասնագետներին: Հաշվետու տարում ՇՊՀ-ն ունի **հրավիրյալ** երեք պրոֆեսոր և ութ դոցենտ: ՇՊՀ-ի ուսումնական գործընթացում նման կարգավիճակ ունեցող անձանց ինտեգրումն արդյունավետ կազմակերպելու նպատակով կիրառվում է ճկուն մեխանիզմ, որը ներդրել է 2022-2023 ուստարվանից: Այն է՝ ԳԽ որոշմամբ նման կարգավիճակ ունեցող մասնագետներին թույլատրվել է թվային տեխնոլոգիաների կիրառմամբ իրականացնելու իրենց մասնագիտական գործառնությունները:

ՊԴ և ՈԻՕ կազմերի ընտրության քաղաքականության արդյունավետության չափման հիմնական գործիքը շահառուների բավարարվածության ստուգումն է, որն իրականացվում է հարցումների միջոցով:

## 2. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու 2022-2023 ուստարվա ընթացքում ՇՊՀ-ի ստորաբաժանումներն իրենց գործառնություններն իրականացրել են լավարկվող կրթական միջավայրում, որի նկատմամբ ՈՒԳԿԿ-ն առավել քան զգայուն է եղել՝ պայմանավորված իր գործառնությանն առանձնահատկություններով: Կենտրոնը, ինչպես և նախորդ տարիներին, հետևել է իր հիմնական նպատակին՝ մատուցել որակյալ կրթական ծառայություններ՝ որակավորումների ազգային և ոլորտային շրջանակներին, շահառուների և շահակիցների կարիքներին համապատասխան: Կենտրոնն իր գործունեությունն իրականացնում է՝ հետևողականորեն կիրառելով ՊԻԳԲ շրջափուլի ապահովման ներքո: Համակարգված աշխատանքի շնորհիվ Կենտրոնը մասնագիտական կրթության իրականացման համակարգում, որպես ուղենիշ ունենալով համալսարանի զարգացման հիմնական ուղղությունները, բակալավրիատում (առկա/հեռակա) և մագիստրատուրայում ուսումնական գործընթացի պլանավորումը, կազմակերպումը և վերահսկումն իրականացրել է պատշաճ մակարդակով:

2022-2023 ուստարվանից այլևս ՇՊՀ-ն իր գործունեությունը կազմակերպում է երեք՝ ֆակուլտետների և առանձին կարգավիճակ ունեցող Ռազմական ամբիոնի միջոցով: Ինչպես արդեն նշել ենք՝ Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետում ներառված են Մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների, Տնտեսագիտության, Աշխարհագրության և սերվիսի, Կենսաբանության և քիմիայի ամբիոնները, Հասարակական գիտությունների ֆակուլտետում՝ Մանկավարժության, Հոգեբանության և սոցիոլոգիայի, Սպորտի և արվեստի ամբիոնները, Հումանիտար գիտությունների ֆակուլտետում՝ Հայոց լեզվի և գրականության, Օտար լեզուների և գրականության, Պատմության և իրավագիտության ամբիոնները (հիմք՝ Ռեկտորի՝ 15. 08. 2022թ., Հրաման N 81):

ՇՊՀ-ն իրականացնում է ԿԾ-ներ ՈԱՇ-ի 3՝ 6-րդ, 7-րդ և 8-րդ մակարդակներում. բակալավրի առկա՝ 28, հեռակա՝ 20, մագիստրոսի՝ 22 կրթական ծրագրեր:

## 2.1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

2022-2023 հաշվետու ուսումնական տարում ՈՒԳԿԿ-ն հետևողականորեն շարունակել է իր գործունեությունը մրցունակ մասնագետների պատրաստման, ՄԿԾ-ներ ի բարելավման, կրթական ծառայությունների որակյալ մատուցման և այլ ուղղություններով՝ իրականացնելով իր հիմնական գործառույթները: Իր կանոնադրական իրավասությունների շրջանակներում ՈՒԳԿԿ-ն շարունակել է ուսումնական գործընթացի պլանավորման, իրականացման, կազմակերպման և վերահսկման նպատակամետ աշխատանքները:

Հաշվետու ժամանակահատվածում համալսարանի երեք ֆակուլտետները և Ռազմական ամբիոնն ուսումնական գործընթացը կազմակերպել են բակալավրի (առկա/հեռակա) և մագիստրատուրայի (առկա) կրթական պահանջներին համապատասխան: Ստորև ներկայացնում ենք բակալավրի և մագիստրոսի ԿԾ-ներն ըստ մասնագիտական ամբիոնների, կրթական մակարդակների և ուսուցման ձևերի:

### 2022-2023 ՈՒՍՏԱՐՎԱ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՆ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՄԲԻՈՆՆԵՐԻ, ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԵՐԻ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Դասիչ	Մասնագիտություն	Ուսուցման համակարգ	
		Առկա ուսուցման համակարգ	Հեռակա ուսուցման համակարգ
<b>Մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոն</b>			
011401.05.6	Մաթեմատիկա	V	
061101.02.6	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	V	
011401.06.6	Ինֆորմատիկա /տեղեկաբանություն/		V



061105.01.6	Տեղեկատվական տեխնոլոգիաներ	V	V
<b>Տնտեսագիտության ամբիոն</b>			
041301.01.6	Կառավարում (ըստ ոլորտի)	V	V
041401.01.6	Շուկայագիտություն	V	
041101.01.6	Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)	V	V
<b>Աշխարհագրության և սերվիսի ամբիոն</b>			
011401.03.6	Աշխարհագրություն	V	V
	Զբոսաշրջություն	V	
101801.01.6	Սերվիս	V	V
054201.02.6	Քարտեզագրություն և կադաստրային գործ	V	V
<b>Կենսաբանության և քիմիայի ամբիոն</b>			
011401.01.6	Կենսաբանություն	V	V
053101.02.6	Դեղագործական քիմիա	V	V
<b>Հայոց լեզվի և գրականության ամբիոն</b>			
011401.19.6	Հայոց լեզու և գրականություն	V	V
032101.01.6	Լրագրություն	V	
<b>Օտար լեզուների և գրականության ամբիոն</b>			

011401.21.6	Անզլերեն լեզու և գրականություն	V	V
023201.01.6	Թարգմանչական գործ՝ անզլերեն և ռուսերեն	V	
023201.01.6	Թարգմանչական գործ՝ անզլերեն և հայերեն	V	
023201.02.6	Միջմշակութային հաղորդակցություն՝ ֆրանսերեն և հայերեն	V	
011401.20.6	Ռուսաց լեզու և գրականություն	V	V
<b>Սպորտի և արվեստի ամբիոն</b>			
021401.01.6	Դեկորատիվ կիրառական արվեստ	V	
021201.04.6	Համակարգչային գրաֆիկա	V	
011401.09. 6	Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ	V	V
<b>Պատմության և իրավագիտության ամբիոն</b>			
011401.18.6	Պատմություն	V	V
042101.01.6	Իրավագիտություն		V
031201.01.6	Քաղաքագիտություն	V	
<b>Հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոն</b>			
031301.01.6	Հոգեբանություն	V	V
092301.01.6	Սոցիալական աշխատանք	V	V

031401.01.6	Սոցիոլոգիա	V	V
<b>Մանկավարժության ամբիոն</b>			
011301.01.6	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	V	V
011201.01.6	Նախադպրոցական մանկավարժ. և մեթոդիկա		V
011301.03.6	Սոցիալական մանկավարժություն		V
<b>Ռազմական ամբիոն</b>			
011401.16.6	Նախնական զինվորական պատրաստություն	V	V

**ՄԱԳԻՍՏՐԱՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ**

Դասիչ	Մասնագիտություն
<b>Մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոն</b>	
011401.05.7	Մաթեմատիկա
011401.04.7	Ֆիզիկա
061101.02.7	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա
<b>Տնտեսագիտության ամբիոն</b>	
041301.01.7	Կառավարում (ըստ ոլորտի)
<b>Աշխարհագրության և սերվիսի ամբիոն</b>	
101501.02.7	Կայուն զբոսաշրջություն
011401.03.7	Աշխարհագրություն
<b>Կենսաբանության և քիմիայի ամբիոն</b>	

011401.01.7	Կենսաբանություն
072101.08.7	Կենսատեխնոլոգիա
<b>Հայոց լեզվի և գրականության ամբիոն</b>	
011401.19.7	Հայոց լեզու և գրականություն
<b>Օտար լեզուների և գրականության ամբիոն</b>	
011401.21.7	Անգլերեն լեզու և գրականություն
011401.20.7	Ռուսաց լեզու և գրականություն
<b>Սպորտի և արվեստի ամբիոն</b>	
021401.01.7	Դեկորատիվ կիրառական արվեստ
011401.09.7	Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ
<b>Պատմության և իրավագիտության ամբիոն</b>	
011401.18.7	Պատմություն
042101.01.7	Իրավագիտություն
<b>Հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոն</b>	
031301.01.7	Հոգեբանություն
092301.01.7	Սոցիալական աշխատանք
<b>Մանկավարժության ամբիոն</b>	
011301.01.7	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա
011102.04.7	Կրթության կազմակերպում
011301.03.7	Սոցիալական մանկավարժություն
011302.05.7	Հատուկ մանկավարժություն
011302.04.7	Լոգոպեդիա
<b>Ռազմական ամբիոն</b>	
011401.16.7	Նախնական զինվորական պատրաստություն

Ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման նպատակով իրականացվել են բարելավման հետևյալ գործողությունները.

- լավարկվել են մի շարք ներքին իրավական ակտեր, որոնք հնարավորություն են ընձեռելու ոչ միայն կրթական ծրագրերի մշակման, բարելավման, մշտադիտարկման գործընթացները դարձնել առավել արդյունավետ, այլև ապահովել դրանց իրականացման որակը: Այդ մասին առավել մանրամասն ներկայացվում է սույն հաշվետվության «ՌԾ/ԹՎԳԾ ամենամյա հաշվետվություն» մասում:

Հաշվետու տարում նախատեսվել, մեկնարկել և այս պահին ակտիվ փուլում են գտնվում «Ուսանողների ակադեմիական տվյալների էլեկտրոնային բազայի» լավարկման աշխատանքները: Լավարկված բազան գործարկվելու է 2024թ.-ից: Նպատակ ունենալով վերոնշյալ բազան ժամանակի ընթացքում ընդլայնելով դարձնել մի այնպիսի էլեկտրոնային հավելված-հարթակ, որում ՇՊՀ-ի և՛ ուսանողները, և՛ աշխատակիցները անձնական էլեկտրոնային էջերում կգտնեն իրենց ուսումնառությանը և/կամ աշխատանքային գործունեությանը վերաբերող ողջ տեղեկատվական, նորմատիվ իրավական փաթեթը՝ «Ուսանողների ակադեմիական տվյալների էլեկտրոնային բազայում» հաշվետու տարում կատարվել են հետևյալ փոփոխությունները՝

1. Թարմացվել է Ruby լեզվի և Ruby on Rails գործիքակազմի (framework) տարբերակները, որը նշանակում է, որ բարելավվել են գործարկման արագությունը, ապահովությունը և այլ տեխնիկական բնութագրեր:
2. Փոխվել է օգտատերերի կառավարման համակարգը:
3. Ավելացվել են ուսումնական պլանների հիմքի վրա իրականացվող աշխատանքների հնարավորությունները:
4. Հնարավորություն է տրվել ուսանողների էլեկտրոնային հասցեների խմբային ներմուծմանը և այլն:

Այս մասնակի փոփոխությունները, սակայն, ամբողջական չեն ներկայացնում այն գործառնության լավարկումները, որոնք նախատեսվել են ծրագրի հնարավորությունների առումով: Կենտրոնը ծրագրի լավարկման արդյունքում ակնկալում է, որ ապահովվելու է ոչ միայն ուսանողական համակազմի, այլև ՊԴ կազմի (ինչպես վերևում էլ արդեն նշվեց) վերաբերյալ տվյալների մշակումը, նաև ուսումնական պլանների, ամբիոնների ուսումնական ծանրաբեռնվածության աշխատանքների կազմակերպման արագությունը և ճշգրտությունը: Այսպես օրինակ՝ յուրաքանչյուր քննաշրջանից հետո ուսանողները ստանալու են իրենց վերաբերող ամբողջական տեղեկատվությունը էլփոստերին, կամ՝ ուսումնառության ավարտից հետո նրանց մասին տեղեկատվությունը կտեղակայվի

շրջանավարտներին հատկացված առանձին բլոկում: Մա ՇՊՀ-ին հնարավորություն կտա մշտապես դիտարկելու շրջանավարտների կարիքները և, ըստ անհրաժեշտության, տարբեր նախաձեռնություններով (վերապատրաստումներ, սեմինարներ, կարիերայի աջակցություն և այլն) հանդես գալ՝ նպաստելով նրանց մրցակցային առավելությունների մշտական ապահովմանը:

Ընդլայնված հնարավորություններով «Ուսանողների ակադեմիական տվյալների էլեկտրոնային բազայի» գործարկումը քանիցս կբարելավի ուսումնական գործընթացի կազմակերպման, իրականացման և վերահսկման գործընթացները:

Հաշվետու տարում ՈՒԳԿԿ-ն իրականացրել է նաև իր գործառույթներից բխող ամենամյա գործողություններ, ինչպես՝ մասնագիտական ամբիոնների ուսումնական բեռնվածությունների կազմումը, ստուգումը, կատարման վերահսկումը, ժամավճարային հիմունքներով աշխատողների կատարողականների ստուգումը, ինչպես նաև բակալավրի (առկա/հեռակա) և մագիստրատուրայի կրթական ծրագրերի դասատախտակների ստուգումը, ուսուցման գործընթացի իրականացման վերահսկումը, ուսումնական լսարանային ֆոնդի արդյունավետ բաշխումը, դասամատյանների վարման վերահսկումը և այլն:

Կենտրոնն իրականացրել է նաև ուսանողների ավարտական փաստաթղթերի նախապատրաստումը և հաշվառումը, ավարտական, ամփոփիչ և քննական հանձնաժողովների աշխատանքների կազմակերպումը, ՇՊՀ-ի Գիտական խորհրդին ներկայացրել է ամփոփիչ ատեստավորման արդյունքները՝ մասնագիտական ամբիոններում և ֆակուլտետային ընդլայնված նիստերում քննարկելով հանձնաժողովների առաջարկություններն ու դիտարկումները, նկատված խնդիրները: Նշենք, որ 2022-2023 ուստարվա ամփոփիչ ատեստավորմանը մասնակցելու թույլտվություն է տրվել 557 ուսանողի, որոնցից ատեստավորման պահանջները հաղթահարել են 550-ը, 5 ուսանող գնահատվել են «անբավարար», որոնցից 2-ը «Նախնական զինվորական պատրաստություն» մասնագիտության բակալավրի հեռակա ուսուցման համակարգի ուսանողներ են, 2-ը՝ «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ» մասնագիտության բակալավրի հեռակա ուսուցման համակարգի ուսանողներ, և 1-ը՝ «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության բակալավրի հեռակա ուսուցման համակարգի ուսանող: 2 ուսանող չեն ներկայացել ամփոփիչ ատեստավորմանը, որոնցից մեկը «Անգլերեն լեզու և գրականություն»

մասնագիտության բակալավրի հեռակա ուսուցման համակարգի ուսանող է, իսկ մյուսը՝ «Սոցիալական աշխատանք» մասնագիտության բակալավրի առկա ուսուցման համակարգի:

Ուսանողական համակազմից գերազանցության դիպլոմ ստացած շրջանավարտների թիվը բակալավրի առկա համակարգում 89-ն է, հեռակա համակարգում՝ 2-ը, իսկ մագիստրատուրայում՝ 177-ը:

	Ընդամենը դիպլոմ	Գերազանցության դիպլոմ	%
Առկա բակալավրիատ	227	89	39,2
Հեռակա բակալավրիատ	132	2	1,5
Մագիստրատուրա	191	86	45,02
Ընդամենը	550	177	32,18

Նախորդ տարվա համեմատությամբ հաշվետու տարում ևս օրակարգային է գերազանցության դիպլոմների մեծ թվաքանակի հարցը: Այս առումով ձեռնարկվել են մի շարք գործուն քայլեր, ինչպես օրինակ՝ 2024թ.-ին [բակալավրի առկա/հեռակա և մագիստրատուրայի առկա կրեդիտային կրթական ծրագրերով ուսումնառության արդյունքների գնահատման և բողոքարկման](#), [ուսանողների մնացորդային գիտելիքների ստուգման ընթացակարգերի](#) լավարկումը: Նշենք, որ գնահատման համակարգի օբյեկտիվությունը և անաչառությունն ապահովվում է մի շարք գործիքներով, այսպես.

2. Անանուն ստուգումներ. ուսումնական կիսամյակի ընթացքում յուրաքանչյուր ՄԿԾ-ի շրջանակում առնվազն մեկ մասնագիտական և համահամալսարանական դասընթացների ստուգումներ անցկացվում են ծածկագրված տեսրերով: Ընդ որում, եթե տվյալ կուրսի մոտ անանուն ստուգումների արդյունքների միջին առաջադիմության և մասնագիտական/ համահամալսարանական մյուս դասընթացների միջին առաջադիմության տարբերությունը գերազանցում է 30%-ը, ապա հաջորդ կիսամյակում նույն կուրսի մոտ ևս մեկ մասնագիտական/համահամալսարանական դասընթացից կազմակերպվում է անանուն ստուգում:

Արդյունքների նույնպիսի պատկերի դեպքում տվյալ կուրսի մոտ բոլոր դասընթացներից գրավոր ստուգումները հաջորդիվ անցկացվում են անանուն:

3. Մնացորդային գիտելիքի ստուգում՝ ակադեմիական խմբի/կուրսի մոտ տվյալ դասընթացից 90 և ավելի միավոր ընդհանուր առաջադիմության արդյունքի գրանցման դեպքում իրականացվում է մնացորդային գիտելիքի ստուգում: Վերոգրյալից զատ, ուսանողների մնացորդային գիտելիքների ստուգման ոչ բավարար արդյունքների գրանցման դեպքում Ռեկտորի հրամանով ստեղծվում է հանձնաժողով՝ ՄԿԾ-ի պատասխանատուի և ուսումնական խորհրդատուի պարտադիր ներգրավմամբ: Ըստ վերլուծության արդյունքների՝ հանձնաժողովը ՈւԳԿԿ-ին առաջարկում է տվյալ դասախոսի մոտ իրականացնելու դասալսումներ և/կամ տվյալ կուրսի մոտ մեկ կամ երկու առարկայից ևս կազմակերպել մնացորդային գիտելիքների ստուգում, և/կամ, ըստ հնարավորության, դասալսումներ՝ նույն կուրսում նույն դասախոսի մոտ:
4. Կրկնակի ստուգում՝ ՈւԳԿԿ-ի առաջարկությամբ յուրաքանչյուր ակադեմիական խմբի/կուրսի մոտ հատկապես ամենաբարձր և ամենացածր արդյունքներ գրանցած աշխատանքները լուծարային հանձնաժողովի կողմից ենթարկվում են կրկնակի ստուգման:


Ստորև ներկայացնում ենք գերազանցության դիպլոմներ ստացած ուսանողների թվաքանակն ըստ բակալավրի և մագիստրոսի ԿԾ-ների ի վերջին երեք ուստարիների համեմատությամբ:



**ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ԴԻՊԼՈՄ ՍՏՏՅԱԾ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿ  
ԲԱԿԱԼԱՎՐԻ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**


<b>N</b>	<b>Մասնագիտություն</b>	<b>2020-2021 ուստարի</b>	<b>2021-2022 ուստարի</b>	<b>2022-2023 ուստարի</b>
1	Մաթեմատիկա	2	2	1
2	Ֆիզիկա	0	0	0
3	Ինֆորմ. և կիր. մաթեմատիկա	0	1	1
4	Կառավարում (ըստ ոլորտի)	6	3	6
5	Տեղեկատվական տեխնոլոգիաներ	2	0	2
6	Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)	2	0	2
7	Աշխարհագրություն	1	0	2
8	Կենսաբանություն	2	0	2
9	Դեղագործական քիմիա	0	0	2
10	Քարտեզ. և կադաստրային գործ	2	1	2
11	Շուկայագիտություն	4	0	1
12	Հայոց լեզու և գրականություն	1	3	4
13	Անգլերեն լեզու և գրականություն	5	1	7
14	Ռուսաց լեզու և գրականություն	1	2	3
15	Թարգմանչ. գործ՝ անգլերեն և ռուսերեն	1	0	2

<b>16</b>	Թարգմանչ. գործ՝ անգլերեն և հայերեն	3	2	5
<b>17</b>	Լրագրություն	0	0	1
<b>18</b>	Դեկորատիվ կիրառական արվեստ	5	0	1
<b>19</b>	Համակարգչային գրաֆիկա	1	0	3
<b>20</b>	Սերվիս	1	0	5
<b>21</b>	Պատմություն	7	1	5
<b>22</b>	Քաղաքագիտություն	0	0	1
<b>23</b>	Հոգեբանություն	6	6	12
<b>24</b>	Սոցիալական աշխատանք	3	3	4
<b>25</b>	Սոցիոլոգիա	6	6	10
<b>26</b>	Տարրական մանկ. և մեթոդիկա	5	3	2
<b>27</b>	Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ	0	1	3
<b>28</b>	Նախնական զինվ. պատրաստություն	7	2	0
<b>Ընդամենը</b>		<b>74</b>	<b>37</b>	<b>89</b>



**ԲԱԿԱԼԱՎՐԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**

N	Մասնագիտություն	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի
1	Սոցիալական մանկավարժություն	2	0	
2	Սոցիալական աշխատանք	1	2	1
3	Հայոց լեզու և գրականություն	0	3	
4	Կերպարվեստ	0	1	
5	Հոգեբանություն	0	1	1
<b>Ընդամենը</b>		<b>3</b>	<b>7</b>	<b>2</b>



ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

N	Մասնագիտություն	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի
1	Մաթեմատիկա	5	5	0
2	Ֆիզիկա	2	0	0
3	Ինֆորմ. և կիր. մաթեմատիկա	2	5	0
4	Կառավարում (ըստ ոլորտի)	4	5	1
5	Աշխարհագրություն	3	0	0
6	Կենսաբանություն	4	3	3
7	Կենսատեխնոլոգիա	0	4	1
8	Հայոց լեզու և գրականություն	4	3	1
9	Անգլերեն լեզու և գրականություն	7	3	4
10	Ռուսաց լեզու և գրականություն	3	2	0
11	Դեկորատիվ կիրառական արվեստ	2	1	4
12	Կայուն զբոսաշրջություն	0	9	3
13	Պատմություն	6	5	5
14	Իրավագիտություն	15	12	2
15	Հոգեբանություն	11	12	10
16	Սոցիալական աշխատանք	15	8	10
17	Տարրական մանկ. և մեթոդիկա	6	9	9
18	Կրթության կազմակերպում	12	13	10

<b>19</b>	Սոցիալական մանկավարժություն	5	4	3
<b>20</b>	Հատուկ մանկավարժություն	0	15	9
<b>21</b>	Լոգոպեդիա	0	14	4
<b>22</b>	Ֆիզիկական դաստ. և սպորտ. մարզումներ	1	2	3
<b>23</b>	Նախնական զինվ. պատրաստություն	5	3	4
<b>Ընդամենը</b>		<b>112</b>	<b>137</b>	<b>86</b>



Հետաքրքիր է դիտարկել նաև վերջին հինգ տարիների համեմատական պատկերը ստորև ներկայացված աղյուսակներով և զժապատկերներով.

**ԲԱԿԱԼԱՎՐԻ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**

Մասնագիտություն		2018-2019 ուստարի			2019-2020 ուստարի			2020-2021 ուստարի			2021-2022 ուստարի			2022-2023 ուստարի		
		Տալ դիպլոմ	Գերազանց. դիպլոմ	Ոչ գերազանց. դիպլոմ	Տալ դիպլոմ	Գերազանց. դիպլոմ	Ոչ գերազանց. դիպլոմ	Տալ դիպլոմ	Գերազանց. դիպլոմ	Ոչ գերազանց. դիպլոմ	Տալ դիպլոմ	Գերազանց. դիպլոմ	Ոչ գերազանց. դիպլոմ	Տալ դիպլոմ	Գերազանց. դիպլոմ	Ոչ գերազանց. դիպլոմ
1	Մաթեմատիկա	5	3	2	2	1	1	5	2	3	3	2	1	2	1	1
2	Ֆիզիկա	3	-	3	3	2	1	2	0	2	0	0	0	0	0	0
3	Ինֆորմատիկա և կիրառ. մաթեմատիկա	8	3	5	12	2	10	10	0	10	6	1	5	1	1	0
4	Կառավարում(ըստ ոլորտի)	3	-	3	9	3	6	11	6	5	6	3	3	9	6	3
5	Տեղեկատվական տեխնոլոգիաներ	-	-	-	3	-	3	8	2	6	0	0	0	6	2	4

**«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ  
ՈՒԳԿԿ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ – 2024**

6	Հաշվապահական հաշվ. և հարկում(ըստ ոլորտի)	-	-	-	-	-	-	5	2	3	0	0	0	6	2	4
7	Աշխարհագրություն	3	-	3	3	3	0	4	1	3	3	0	3	4	2	2
8	Կենսաբանություն	10	1	9	11	2	9	6	2	4	3	0	3	10	2	8
9	Դեղագործական քիմիա	13	2	11	6	1	5	8	0	8	0	0	0	6	2	4
10	Քիմիա	1	-	1	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
11	Քարտեզագրություն և կադաստրային գործ	3	-	3	5	1	4	4	2	2	6	1	5	8	2	6
12	Շուկայագիտություն	-	-	-	-	-	-	4	4	0	0	0	0	1	1	0
13	Հայոց լեզու և գրականություն	18	2	16	9	4	5	18	1	17	6	3	3	8	4	4
14	Լրագրություն	3	1	2	3	-	3	4	0	4	3	0	3	2	1	1
15	Անգլերեն լեզու և գրականություն	34	13	21	20	4	16	28	5	23	4	1	3	15	7	8
16	Ռուսաց լեզու և գրականություն	11	2	9	10	2	8	3	1	2	5	2	3	6	3	3
17	Ֆրանսերեն լեզու և գրականություն	3	-	3	1	-	1	-	-	-	-	-	-	-	-	-
18	Գերմաներեն լեզու և գրականություն	1	1	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
19	Միջմշ. հաղորդ.՝ ֆրանս. և հայերեն	-	-	-	-	-	-	5	1	4	-	-	-	-	-	-
20	Թարգմանչական գործ՝ անգլ. և ռուսերեն	3	-	3	11	1	10	16	1	15	0	0	0	11	2	9
21	Թարգմանչական գործ՝ անգլ. և հայերեն	4	-	4	15	2	13	16	3	13	9	2	7	15	5	10




**«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ  
ՈՒԳԿԿ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ – 2024**

<b>22</b>	Կիրառական արվեստ/Կերպարվեստ և զճ.	14	3	11	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
<b>23</b>	Դեկորատիվ կիր. արվեստ	-	-	-	4	-	4	8	5	3	4	0	4	3	1	2
<b>24</b>	Դիզայն	-	-	-	-	-	-	4	0	4	0	0	0	-	-	-
<b>25</b>	Համակարգչային գրաֆիկա	-	-	-	-	-	-	5	1	4	1	0	1	3	3	0
<b>26</b>	Սերվիս	4	1	3	9	2	7	12	1	11	0	0	0	7	5	2
<b>27</b>	Զբոսաշրջություն	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	2	0	2
<b>28</b>	Պատմություն	12	2	10	14	4	10	14	7	7	3	1	2	11	5	6
<b>29</b>	Իրավագիտություն	20	5	15	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
<b>30</b>	Քաղաքագիտություն	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	1	1	0
<b>31</b>	Հոգեբանություն/Մանկ. և հոգեբ.	12	4	8	8	4	4	7	6	1	10	6	4	28	12	16
<b>32</b>	Սոցիալական աշխատանք	22	5	17	22	2	20	5	3	2	7	3	4	7	4	3
<b>33</b>	Սոցիոլոգիա	-	-	-	-	-	-	16	6	10	6	6	0	21	10	11
<b>34</b>	Տարր. մանկ. և մեթոդիկա /Մանկավարժություն և մեթոդիկա /տարր. կրթության/	34	2	32	27	4	23	32	5	27	15	3	12	18	2	16
<b>35</b>	Մանկ. և հոգեբ. (նախադպրոցական)/ Նախադպր. մանկ. և	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-

**«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ  
ՈՒԳԿԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ – 2024**

	հոգեք.															
<b>36</b>	Ֆիզիկական դաստ. և սպորտ. մարզ./ Ֆիզիկական կուլտուրա և սպորտ	16	1	15	11	-	11	19	0	19	9	1	8	10	3	7
<b>37</b>	Աղապտիվ ֆիզ. կուլտուրա	-	-	-	4	-	4	-	-	-	-	-	-	-	-	-
<b>38</b>	Նախնական զինվորական պատրաստություն/Նախազոր. և ֆիզ. պատրաստություն	16	1	15	12	2	10	22	7	15	7	2	5	6	0	6
<b>Ընդամենը</b>		<b>276</b>	<b>52</b>	<b>224</b>	<b>241</b>	<b>48</b>	<b>193</b>	<b>303</b>	<b>74</b>	<b>229</b>	<b>116</b>	<b>37</b>	<b>79</b>	<b>227</b>	<b>89</b>	<b>138</b>

### ԲԱԿԱԼԱՎՐԻ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ


